



ՁԱՅՆԱՅԻՆ ՊԱՏՈՒՄՆԵՐ

ԴԱՍԸՆԹԱՅԻ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՁԵՌՆԱՐԿ

Երևան | 2021





MEDIA
INITIATIVES
CENTER



ՀՏԴ 378

ԳՄԴ 74.58

Փ 753

«Փողքասթինգ. ծայնային պատումներ» դասընթացի ուսումնամեթոդական ձեռնարկ

Մեդիա Նախաձեռնությունների կենտրոն, Երևան, 2021թ. - 92 էջ

Ձեռնարկը պատրաստել է Մեդիա Նախաձեռնությունների կենտրոնը՝
Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ
իրականացվող «Լսիր ինձ հիմա. Հայաստանում փողքասթինգի
մշակույթի զարգացում» ծրագրի շրջանակներում:

ՀՏԴ 378

ԳՄԴ 74.58

ISBN 978-9939-1-1304-3

© Մեդիա Նախաձեռնությունների կենտրոն, 2021

Հեղինակներ՝

Անահիտ Ղազարյան
Գոհար Խաչատրյան
Նինա Բաղդասարյան
Կուշանե Հոբանյան
Սյուզաննա Թոսունյան

Խմբագրական կազմ՝

Տառյանա Հովհաննիսյան
Նանե Վարդանյան
Լուսինե Խառատյան
Նարինե Սաֆարյան
Նունե Սարգսյան
Քնար Խուդոյան

Ձևավորումը՝

Քրիստինե Սարգսյանի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	4
2. Փողքասթ. բովանդակություն և տեխնոլոգիա	11
3. Փողքասթ. ֆորմատներ և ժանրեր	17
4. Ձայնային պատմասություն (audio storytelling).....	23
5. Ձայնային միջավայր և ձայնի տեսակներ	33
6. Ձայնի կիրառման առանձնահատկությունները (ձայնի դերը աուդիոպատումում)	37
7. Ձայնագրման գործիքներ	45
8. Փողքասթ-երկխոսություն	51
9. Հեղինակի խոսքը և ինչպես գրել/կարդալ «ականջի համար»	59
10. Տարածում, առաջխաղացում և մոնետիզացիա	67
11. Լսարանի ներգրավվում	73
12. Փիթչինգ (Pitching)	77
• Հավելված 1. Խմբագրում Audacity ծրագրով	81
• Հավելված 2. Ձայնագրման հնարքներ. DIY ստուդիա և հեռավար ձայնագրում	87

ՆԵՐՈԱԾՐ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

«Փողքասթինգ. ծայնային պատումներ» դասընթացի ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է բուհերում և ոչ ֆորմալ կրթական միջավայրում փողքասթինգի վերաբերյալ մոդուլ-դասընթացների կազմակերպման համար: Որպես այս թեմայով առաջին հայալեզու հրատարակությունը՝ ձեռնարկի նպատակն է տալ տեսական նյութ, գործիքներ, հանձնարարություններ, մեթոդաբանություն և գնահատման տրամաբանություն: Ձեռնարկի հիմքում դասավանդման միջազգային փորձի ուսումնասիրությունն է և Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի անցկացրած փողքասթի դասընթացներում կիրառված մեթոդաբանությունը:

Ելնելով կոնկրետ կրթական ծրագրով սահմանված ուսումնառության վերջնարդյունքներից՝ դասավանդողը կարող է այս ձեռնարկի հիման վրա կազմել իր դասընթացի առարկայական նկարագիրը: Դասավանդողն ազատ է նաև ընտրելու այս կամ այն թեման մատուցելու, հանձնարարությունները կատարելու և առաջադրանքները ստուգելու մեթոդաբանությունը: Ուղեցույցը, սակայն, ներառում է որոշակի մեթոդաբանական խորհուրդներ:

Այս գրքով ի սկզբանե նպատակ ունեինք կազմելու փողքասթինգի մոդուլ դասավանդողների համար: Սակայն աշխատանքի ընթացքում պարզ դարձավ, որ ուսումնական հաստատություններում չկա նաև այս թեմայով հայալեզու ժամանակակից տեսական գրականություն, նորարարական պատումներ ստեղծելու ուսուցման մեթոդաբանության կարիք էլ կա:

ՌԻԹՅՈՒՆ

Այսպիսով աշխատանքային խումբը որոշեց հրապարկել ավելի մեծ ծավալի նյութ, քան նախատեսված էր: Ստացվել է լայն կիրառելիություն թույլ տվող ձեռնարկ, որի հիման վրա դասախոսները կարող են ոչ միայն փողքասթի բովանդակային և տեխնոլոգիական առանձնահատկություններն ուսումնասիրել, այլև ուսուցման իրենց ծրագիրը մշակել, խորանալ թեմայի մեջ, վերապատրաստվել, որոշ նյութեր առանձնացնել և փոխանցել ուսանողներին, կազմել օգտակար հանձնարարություններ և քննարկումներ:

Ձեռնարկում օգտագործված գրականության ցանկը մեծամասամբ անգլերեն է: Ձայնով և խոսքով պատմություններ կառուցելու մոտեցումները վերլուծված և դասակարգված են առավելապես ամերիկյան, մասամբ՝ նաև՝ արևմտյան երկրների ձայնային արտադրության այլ դպրոցներում: Դրանց ազդեցությունը այլ երկրներում փողքասթինգով զբաղվողների վրա մեծ է: Մասնավորապես, ռուսալեզու արտադրողները, անցնելով փողքասթինգի բումով, սկսել են կիրառել և տեղայնացնել պատմասության սկզբունքները նաև ռուսալեզու շուկայում, սակայն թեմայի ակադեմիական ռեսուրսները դեռևս սահմանափակ հասանելիություն ունեն:

Բուհը կարող է իր հայեցողությամբ դասընթացը դարձնել առանձին առարկա կամ ներառել այն արդեն գոյություն ունեցող առարկաների կազմում: Փողքասթի դասընթացը կարող է դառնալ ռադիոլրագրությանը, մուլտիմեդիա լրագրությանը վերաբերող դասընթացների մաս, ինչպես նաև հանդես գալ իբրև կամընտրական առարկա:

ՁԵՌՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ձեռնարկը կազմված է **11 թեմաներից**, համապատասխան **գործնական** առաջադրանքներից և տեխնիկական հուշումների երկու հավելվածներից: Դասավանդողն ազատ է օգտագործելու դասընթացի այս բաղադրիչներն ըստ նպատակահարմարության, օրինակ, որևէ թեմայի հատկացնել ոչ թե մեկ (ինչպես ձեռնարկում է տրված), այլ երկու դասաժամ, ընտրել գործնական հանձնարարություններից միայն մեկը կամ առաջարկել իրենը: Յուրաքանչյուր թեմա ներկայացված է հակիրճ նկարագրությամբ, հավելյալ գրականությամբ, քննարկման համար նախատեսված տեսական հարցերով: Ձեռնարկն առաջարկում է խմբով լսելու, քննարկելու, առցանց հարթակներ ուսումնասիրելու, ծայնի հետ աշխատելու հանձնարարություններ (ծայնագրում, մոնտաժ, ձևավորում):

Գործնական առաջադրանքների համար կարելի է հատկացնել տեսականին հաջորդող յուրաքանչյուր դասը: Բացի դա, անհատական առաջադրանքները հանձնարարվում են որպես տնային աշխատանք:

Պատմասության (storytelling), արտադրության և տարածման դասերն ավարտելուց և թեմատիկ հանձնարարությունները կատարելուց հետո սովորողները դասընթացի ավարտին կպատրաստեն փողքասթ, որը կհամարվի **ավարտական նախագիծ**:

Ավարտական նախագծի մշակմանը հատկացվում է առնվազն երեք դաս: Առաջին դասին սովորողը կամ սովորողների խումբը ներկայացնում են իրենց առաջարկը՝ փիթջը, որը հնարավորինս մանրամասն նկարագրում է փողքասթ գաղափարը, դրա թեման, ձևաչափը, թիրախային լսարանը և առաջխաղացման պլանը:

Լսարանը և դասավանդողը խաղում են խմբագրի դերը և հարցերի ու մեկնաբանությունների միջոցով օգնում գաղափարի հեղինակին կամ հեղինակներին նկատել ծրագրի թերությունները և շտկել դրանք հաջորդ դասին: Երկրորդ դասին խմբերը ներկայացնում են իրենց առաջին էպիզոդները: Լսարանը դրանք քննարկում է: Վերջին դասին հեղինակը կամ թիմը հրապարակում են փոդքասթի էպիզոդն իրենց նախընտրած առցանց հարթակում:

Փոդքասթն անհատական մեդիա է, որի արտադրողը պիտի ունենա միաժամանակ և՛ բովանդակություն մշակելու, և՛ այն տեխնիկապես արտադրելու, և՛ տարածելու գիտելիք և հմտություններ: Ուստի «մարդ-մեդիա» դառնալու համար նա պետք է ձեռք բերի երրորդ անձանց աջակցությունը ստանալու հմտություն: Սա հաշվի առնելով՝ խորհուրդ է տրվում խրախուսել մասնակիցներին գնահատական և խորհուրդներ տալ միմյանց գործերի մասին (peer review), աշխատել թիմային հանձնարարությունների վրա, մասնակցել դերային խաղերի: Ցանկալի է կիրառել նաև համագործակցային ակտիվ ուսումնառությանն ուղղված մեթոդներից թերևս ամենատարողունակը՝ «շրջված լսարան» մեթոդը. նոր թեմայի կամ դրա մի հատվածի, առանձին հիմնախնդրի ուսումնասիրությունը տրվում է իբրև տնային առաջադրանք: Ուսանողը փորձում է ինքնուրույն ծանոթանալ թեմային, դուրս բերել հիմնական հասկացություններն ու «կռիվ տալ» նոր գիտելիքի հետ:

Երբ ուսանողին տալիս ենք հնարավորություն ակտիվորեն ներգրավվելու այն նյութի մեջ, որն ինքը սովորում է, նա էլ ավելի պատրաստակամ է դառնում՝ փորձելով արդյունավետորեն դրսևորել իր ողջ ներուժը:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

- համակարգիչ
- ձայնագրիչ կամ սմարթֆոն
- ականջակալներ (նախընտրելի է ստերեո)
- ձայնային մոնտաժի գործիք՝ սովորողի ընտրությամբ: Դասընթացն առաջարկում է անվճար և կիսապրոֆեսիոնալ ձայնային խմբագրման գործիք՝ Audacity.
- պրոյեկտորով և բարձրախոսներով լսարան

Դասի առաջադրանքները կիսելու համար թղթապանակ է բացվում ամպային հարթակներում (**Google Drive, Dropbox, Google Slides**): Այստեղ կարող եմ հավաքվել բոլոր հանձնարարությունները, որպեսզի դասավանդողը, և սովորողները լսեն և քննարկեն լսարանում:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՆԱԽԱԴԱՅՄԱՆՆԵՐԸ

Թեմաների արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է, որպեսզի սովորողն ունենա որոշակի գիտելիք և պատկերացումներ՝

- լրագրության հիմունքների,
- լրատվամիջոցների ժամանակակից համակարգի և տեսակների,
- լրագրողական էթիկայի կանոնների,
- մեդիա տեխնոլոգիաների վերաբերյալ:

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դասընթացի ավարտին սովորողը կտիրապետի՝

- ձայնային պատմասության հիմնական կանոններին,
- նյութն ուսումնասիրելու և հետազոտելու սկզբունքներին,
- աուդիոպատումի սցենար ստեղծելու, մշակելու և նյութը գրագետ կառուցելու հիմունքներին,
- փողքասթ պատրաստելու տեխնիկական գործիքներին, դաշտային և տաղավարային ձայնագրություններին, ձայնային մոնտաժին,
- հարցազրույցներ վարելու, ձայնագրելու, ձայնի տարբեր տեսակներ (խոսք, բնաձայն, երաժշտություն) կիրառելու և զրույց-փողքասթներ վարելու հմտություններին,
- փողքասթներ հրապարակելու և տարածելու (հոսթինգ և սթրիմինգ) ծառայություններին,
- փողքասթի առաջխաղացման և մոնետիզացման գործիքներին:

ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Դասընթացի ավարտին սովորողների մասնակցությունը խորհուրդ է տրվում գնահատել այս երեք բաղադրիչների հանրագումարով՝

Թեմատիկ հանձնարարությունների կատարում և ակտիվ մասնակցություն	50 %
Միջանկյալ ստուգում (ձայնային պատումի պատրաստում)	20 %
Ամփոփիչ ստուգում (ավարտական փողքասթի գաղափարի մշակում/փիթչ/էպիզոդ)	30 %

ԹԵՄԱ

1



ՓՈՂՔԱՍԹ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Փոդքասթ կոչվելու համար աուդիոֆայլերի շարքը պետք է ունենա ընդհանուր թեմա և/կամ ձևաչափ: Փոդքասթի բաղկացուցիչ ֆայլերը կոչվում են էպիզոդներ կամ թողարկումներ: Փոդքասթը կարող է բաղկացած լինել եթերաշրջաններից:

Մինչև 2004 թվականը թվային հարթակներում տարածվող աուդիո բովանդակությունն անվանում էին աուդիոբլոգ: «Փոդքասթինգ» եզրույթն առաջին անգամ գործածել է բրիտանացի տեխնոլոգ, հեռարձակման մասնագետ Բեն Ջամերսլին The Guardian-ում տպագրված «Ձայնային հեղափոխություն» հոդվածում¹: Փոդքասթ բառը բաղկացած է «iPod» (Apple ընկերության մեդիա նվազարկիչը) և «Broadcast» (թարգմանաբար՝ հեռարձակել) բառերից: Կարճ սահմանմամբ՝ «Փոդքասթը ռադիո է՝ ցպահանջ» (Podcast is radio on demand):

Փոդքասթի նյութն ավելի անմիջական է, այն ավելի մտերմիկ հաղորդակցություն է հեղինակի և ունկնդրի միջև: Հեղինակն ազատ է ընտրելու թեման, որի մասին ուզում է խոսել, գծագրելու պատմության իր նախընտրած ձևաչափը: Նա կարող է կիրառել խոսակցական լեզու (փոդքասթը չի պահանջում պաշտոնական բառապաշար), որոշել փոդքասթի տևողությունը, հեռարձակելու նախընտրելի ժամանակը (ի տարբերություն ռադիոյի՝ սահմանափակում չկա), ի վերջո՝ խմբագրել իր տեքստն այնպես, ինչպես ինքը կկամենա:

Փոդքասթում չկա թեմայի սահմանափակում: Գոյություն ունեն փոդքասթեր գիտության, տեխնիկայի, մշակույթի, լեզվի, կենցաղի և այլ թեմաների մասին: Եթե դուք լավ կոշկակար եք ու համոզված եք, որ կոշկակարության մասին կարող եք ավելի լավ պատմել, քան մեկ ուրիշը, ապա փոդքասթը ձեր նպատակին հարմար ձևաչափ է: Այսպիսի Նեդ (Նիշային) թեմաներով փոդքասթները փոքր, բայց հավատարիմ լսարան ունեն:

¹ <https://www.theguardian.com/media/2004/feb/12/broadcasting.digitalmedia>

Փողքասթում կան նաև պատմասության տարբեր մոտեցումներ: Ամերիկյան ռադիոավանդույթից փողքասթին է անցել «մտքի թատրոն» (theatre of the mind) մեթոդը: Այս մեթոդով ստեղծագործողները լսարանին փոխանցում են ոչ միայն տեղեկություն, այլև միջավայր, իրավիճակ, մթնոլորտ: Սա, իհարկե, հատուկ փողքասթ տեխնոլոգիայի բացահայտումը չէ. ծայնով պատկերներ ստեղծելը բնորոշ է ծայնային տարբեր մեդիաների՝ ռադիոյին և ատդիոգրքին: Թերևս այս պատճառով են փողքասթը երբեմն անվանում «ռադիոյի վերածնունդ»: Լսողը մտովի տեղափոխվում է կոնկրետ տարածություն ու ժամանակ: Պատահական չէ, որ այս ձևաչափով արտադրվում է մեծ ծավալի գեղարվեստական բովանդակություն: Կան տարբեր ժանրերի փողքասթ-ֆիլմեր՝ սարսափներ, կատակերգություններ, նաև օպերաներ, գիտաֆանտաստիկ պիեսներ:

Փողքասթի հեղինակը նաև ազատ է որոշելու լեզուն: Ենթադրենք՝ պատրաստում է էպիզոդներ միայն լոռեցիների համար. նա կարող է փողքասթը ստեղծել լոռվա բարբառով: Լեզվով է պայմանավորվում նաև թիրախային լսարանը, որին ուղղված է ասելիքը: Օրինակ՝ նեղ մասնագիտական փողքասթների հեղինակները խոսում են օգտագործելով մասնագիտական տերմիններ:


Փողքասթն արտադրելն էժան է: Որակյալ ստուդիա կարելի է ստանալ նաև տնային պայմաններում, կան անվճար հրապարակման հարթակներ:

Մեդիաընկերություններն իրենց փողքասթները հրապարակում են՝ կայքերում տեղադրելով նվագարկիչ (player), իսկ անհատ ստեղծագործողները, որպես կանոն, օգտվում են ավելի մատչելի հնարավորություններից՝ հոսթինգ ծառայություններից: Դրանք կայքեր են, որոնք մեկտեղում են հեղինակների աուդիոֆայլերը և նրանց տալիս են տարածման ձևաչափի RSS ֆայլ: Փողքասթի RSS-ը (RDF Site Summary կամ Really Simple Syndication) հեղինակները տեղադրում են տարածման ծառայություններում (streaming platforms): Դրանցից ամենահայտնիներն են Apple Podcast-ը և Google Podcast-ը: Այս ծառայությունները RSS-ն ուղարկում են հեռախոսային հավելվածներին:

Podcatcher-ը ծրագրակազմ է (software), որը թույլ է տալիս «բռնել» փողքասթը: Այս հավելվածներում փողքասթ ալիքին բաժանորդագրվողներն ավտոմատ կերպով ստանում են նոր հրապարակումներն իրենց հեռախոսներում:

Ավելի լայն լսարանին հասնելու համար փողքասթերները նաև օգտվում են վիդեո հոսթինգի կայքերից, ինչպես, օրինակ youtube-ն է: Ի դեպ, փողքասթների զարգացմանը և մրցակցությանը զուգահեռ՝ անվճար հարթակներն աստիճանաբար սկսում են որոշակի գումար պահանջել օգտատիրոջից փողքասթ ալիք ունենալու և այն տարածելու համար: Ինչո՞ւ է սա կարևոր. փողքասթ լսելու, առավել ևս՝ նվիրված հետևորդ լինելու համար լսարանը պետք է անի մի քանի քայլ. ներբեռնի հավելված կամ այցելի ձեր կայք, բաժանորդագրվի ալիքին (փողքասթ-նվագարկիչները սովորաբար չեն աշխատում սոցիալական մեդիայում): Ինչպե՞ս համոզել նրան անել այդ քայլերը: Առաջինը՝ պետք է ունենալ որակյալ բովանդակություն, երկրորդ՝ պետք է գրագետ տարածում իրականացնել՝ հաշվի առնելով փողքասթի սպառման առանձնահատկությունները:

Փողքասթ լսելու հավելվածները հարմար են օգտատերերի համար, քանի որ իրենց հետաքրքրող թեմաներով նոր փողքասթներ բացահայտելու հնարավորություն են տալիս:



ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպես նախաբան՝ դասավանդողը քննարկում է անհատականացված (on demand) մեդիայի և ավանդական լրատվամիջոցների առանձնահատկություններն ու տարբերությունները: Մասնավորապես, ընդգծվում է, որ անհատական փողքասթներին հատուկ են նիշային կամ մասնագիտական թեմաները: Այդպիսի մասնագիտական փողքասթներ կարող են ստեղծել ոչ միայն պրոֆեսիոնալ լրագրողները, այլև ոլորտի փորձագետները:

Դասավանդողը նաև հարցադրում է անում՝ ինչ է փողքասթը մասնակիցների համար, և ունեն արդյոք նախընտրած փողքասթ: Պետք է քաջալերել սովորողներին՝ պատմելու իրենց փողքասթային նախասիրությունների մասին և հիմնավորել դրանք: Կարևոր է, որ լսարանը գա ընդհանուր հայտարարի՝ ինչն է փողքասթում գրավում միջին սպառողին, և ինչ նախապայմաններ են անհրաժեշտ գրավիչ աուդիոբովանդակություն ստեղծելու համար: Դասավանդողը պետք է կարողանա ցույց տալ, որ տպավորիչ աուդիոարտադրանք ստեղծելը պայմանավորված է ոչ միայն թեմայի ընտրությամբ, այլև ստեղծագործական ու տեխնիկական հնարավորությունների իմացությամբ և կիրառմամբ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Դիտել բրիտանացի մեկնաբան Չարլի Ռոսի՝ փողքասթի հեղափոխությանը նվիրված գրույցը («The Revolution of Podcast») չորս բանախոսների հետ, առանձնացնել նրանց առաջ քաշած հիմնական թեզիսները: <https://bloom.bg/3wvab3U>
- Լսել և քննարկել «Սինեսկոպ» փողքասթի սարսափ ժանրի ֆիլմերում ձայնի ազդեցության մասին էպիզոդը: <https://cinescope.art.blog/2020/01/24/you-aint-heard-nothin-yet/>

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- ի՞նչ դեր ունի ձայնը վիզուալացված աշխարհում,
- որտե՞ղ և ինչպե՞ս է ձայնը սպառվում,
- ձայնի հասարակական ազդեցության ի՞նչ օրինակներ կան (ոգեշնչող, համախմբող կամ այլ)
- ձայնի ազդեցության ի՞նչ տարածքներ գոյություն ունեն. եկեղեցի, ցույցեր, լսարան, մարզադաշտ...
- քննարկել ձայնի ասոցիատիվ բնույթը:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

To Get Things More Real, An Interview with Ira Glass,

<https://bit.ly/2PY6F1v>

Փողքասթ. սիրողական պրոդուսներից՝ մեդիա ֆենոմեն,

<https://bit.ly/2QGsBhl>

Լսելը ցրում է վախը, «Երևան» ամսագիր, մարտ, 2020,

<https://medium.com/evnmag/podvices-16ecd7d4bd55>

«Փողքասթ լսել ցանկացողը փնտրում է զրույց»

<https://bit.ly/2S3hYqu>

ԹԵՄԱ

2



ՓՈՂՔԱՍԹ. ՖՈՐՄԱՏՆԵՐ ԵՎ ԺԱՆՐԵՐ

Ազատ ստեղծագործելու հնարավորության շնորհիվ այս մեդիան թույլ է տալիս ավանդական ձևաչափերի ու ժանրերի կողքին ստեղծել ու կիրառել նորերը: Ամենատարածված ձևաչափերի մասին՝ ստորև:

Երկխոսություն – փողքասթի հեղինակն ամեն էպիզոդում ունի նոր հյուր, երբեմն՝ հյուրեր, որոնք էլ ներկայացնում են փորձագիտական տեղեկատվություն և/կամ իրենց կարծիքը, գնահատականը, մեկնաբանությունը այն թեմայի վերաբերյալ, որը փողքասթի հիմնասյունն է: Օրինակ՝ «Փնթի խողովակը» (<https://bit.ly/310a5Xi>) փողքասթի առաջին եթերաշրջանը:

Մենախոսություն – հիմնված է հեղինակի անձնական պատմությունների, փորձառության վրա: Այս տեսակն ընտրելիս պետք է հաշվի առնել էպիզոդի տևողությունը, որովհետև որքան էլ այն համեմված լինի երաժշտությամբ կամ ծայնային էֆեկտներով ու գրագետ ձևավորում ունենա, միևնույն է՝ գլխավոր դերում հեղինակն է, ու պետք է հասկանալ՝ արդյո՞ք նա ի վիճակի է իր ընտրած տևողության մեջ այնքան գրավիչ լինել, որ ունկնդիրը չսեղմի անջատման կոճակը: Հայկական փողքասթ տիրույթում մենախոսություն է «Մայրիկի անուշ» փողքասթի «Արտասովոր հարցեր» շարքը:

Համատեղ փողքասթ – այն ներառում է երկու կամ ավելի մարդկանց, որոնք հիմնականում այնքան լավ են իրար ճանաչում, որ ներդաշնակ են փողքասթում, կարող են կես բառից իրար հասկանալ, քննարկել որևէ թեմա, ունենալ տարբեր կարծիքներ, բանավիճել: Այս տեսակն ընկերական միջավայր է ստեղծում, ու եթե հեղինակներն իսկապես թեմային լավ են տիրապետում, ունկնդիրը շատ արագ դառնում է թիմի անդամ ու ընդգրկվում գրույցի մեջ՝ թեկուզ առանց անմիջական մասնակցության: Հայկական փողքասթներից այս տեսակին է պատկանում «Ականջօղը»:

Փողքասթ-քննարկում – սա ևս բավական տարածված ձևաչափ է, որն ունի երկխոսության բնույթ և նման է հարցազրույցին, որովհետև փողքասթերը հարցազրույց է վարում, սակայն հյուրերի քանակը մշտապես երկուսից ավելի է: Սանման է քննարկման, որտեղ տարբեր մասնագետներ, վերլուծաբաններ, փորձագետներ քննարկում են ընտրված թեման, հայտնում կարծիքներ, լսում միմյանց: Այս տեսակը թույլ է տալիս անկեղծ ու անմիջական զրույցներ ունենալ: Այսպիսի փողքասթ-քննարկում է «Ты же мать»-ը՝ ծնողավարության մասին <https://bit.ly/3vMXD7n>

Պատմողական փողքասթ – այս ֆորմատի փողքասթները հիմնականում նվիրված են մեկ հերոսի և պատմում են նրա հետ կատարված դեպքերի մասին: Պատմական իրադարձություններ, սպանություններ, էվերեստի գագաթը մագլցողներ, քրեական պատմություններ: Պատմողական փողքասթի ամենահայտնի օրինակը, թերևս, ամերիկյան [This American Life](https://bit.ly/3ccJOYa) շոուն է, հասանելի է ոչ միայն իբրև փողքասթ, այլ նաև հեռարձակվում է ԱՄՆ-ի բազմաթիվ ռադիոկայաններով շաբաթը մեկ անգամ պարբերականությամբ: Վարողն ընտրում է թեմա և այդ թեմայի շուրջ հրապարակում մի քանի պատում: Օրինակ՝ Fiasco! (2013) (<https://bit.ly/3ccJOYa>), այստեղ կարող ենք լսել հինգ տարբեր ֆիասկոների պատմություններ: Պատմողական փողքասթները հաճախ լինում են սերիալիզացված: Ռուսալեզու շուկայում հայտնի է «Голос Зоны» (<https://bit.ly/3fKwi0g>) փողքաստը, որ պատմում է ամբաստանյալների մասին, ովքեր ռեփ խումբ են ստեղծել բանտում:

Փողքասթ-թատրոն – այստեղ կարող են լինել մեկ կամ մի քանի դերասաններ, առկա են ձայնային էֆեկտներ և երաժշտություն: Կան դրամատուրգներ, որոնք հնչյունավորում են իրենց հեղինակած գիրքը փողքասթ-թատրոնի ժանրում՝ էպիզոդը վերածելով յուրատեսակ ռադիոֆիլմի: Փողքասթի այս տեսակը Հայաստանում չկա: Այն լուրջ ռեսուրսներ ուներդրումներ է պահանջում: Աշխարհում, սակայն, ամենատարածվածներից մեկն է, ինչպես, օրինակ, «Welcome to Night Vale»-ն է (<https://apple.co/3ulhKIK>):

Վավերագրական փողքասթ – փողքասթի ամենահայտնի տեսակներից է, որի ընթացքում փողքասթերն օգտագործում է հարցազրույցներ, փաստեր, ծայնային էֆֆեկտներ, իր խոսքը՝ պատմելու իրական պատմություն իրական հերոսների մասին: Նման փողքասթ է Tracca 161-ը (<https://bit.ly/3cf4q26>), որը իրական պատմություն է սերիական հանցագործության մասին: Հայկական վավերագրական փողքասթներից են Սոցփողը (<https://bit.ly/3wSuTtY>) և Անցակետ Ջվարթնոցը (<https://bit.ly/3idIJDo>)

Փողքասթ՝ առանց հաղորդավարական մեկնաբանության (non-narrated) – փողքասթի այս ձևաչափում բացակայում է հաղորդավարական տեքստը, չկան մեկնաբանություններ: Ասելիքը կառուցվում է հյուրի/հերոսի խոսքի, ծայնային էֆֆեկտների ու երաժշտական ձևավորման օգնությամբ: Սա փորձարարական ձև է, որը բավական արագ տարածում է գտնում աշխարհում՝ այսպիսով հնարավորություն տալով ունկնդրին առանց մեկնաբանությունների լսել տվյալ մարդու պատումը: Այստեղ շատ ավելի բարդ է հասնել կոմպոզիցիոն ամբողջականության. հեղինակից կամ հեղինակներից մեծ ջանքեր են պահանջվում թե՛ հյուրի հետ զրուցելու և թե՛ այդ զրույցի պատառիկները գրագետ միահյուսելու ժամանակ: Հայաստանի Հանրային ռադիոն ունի նմանատիպ երկու փողքասթ՝ «Սպասում» և «Հրամանը՝ ապրել» շարքերը: Առանց հեղինակի խոսքի կառուցված փողքասթներից ամենահայտնին «Radio Diaries» <https://www.radiodiaries.org/> ամերիկյան Նախագիծն է: Հեղինակ Ջո Ռիչմանը ծայնագրիչը տալիս է ոչ թե լրագրողներին, այլ սովորական մարդկանց/հերոսներին, ովքեր ծայնագրում են իրենց առօրյան: Այնուհետև Ռիչմանը խմբագրում և ձևավորում է նյութը՝ ստանալով ռեալիստական պատումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս դասի շրջանակում ներկայացվում են թեմատիկ կառուցվածքային տարբեր ձևաչափեր ունեցող փողքասթների էպիգոդներ, որոնք, հատվածաբար կամ ամբողջությամբ, լսարանը կարող է ունկնդրել տեսական նյութի մատուցման ողջ ընթացքում: Օրինակ, դասավանդողը ներկայացնում է ձևաչափը կամ ժանրը, հետո լսում են համապատասխան էպիգոդը: Կամ, հակառակը, ներկայացվում է թողարկումը կամ դրա մի մասը, օրինակ՝ առաջին 7-10 վայրկյանը կամ միջնամասից 20 վայրկյան տևողությամբ հատված, և սովորողները փորձում են ինքնուրույն գծագրել ձևաչափը, գաղափարի իրագործման եղանակները: Եթե դասավանդողը որոշում է, որ այս թեմային պետք է երկու դաս հատկացնել, ապա կարող է հանձնարարել փողքասթներն ուսումնասիրել նաև տանը՝ փորձելով պատասխանել առաջադրված մի շարք հարցերի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Լսել յուրօրինակ ժանր, ձևաչափ և կառուցվածք ունեցող հետևյալ պատումները և քննարկել կիրառված նորարարական մոտեցումները:
- «Just Another Fish Story» (<https://bit.ly/3sROSYk>). պատմում է ոչ միայն մի կետի, այլև, դրա միջոցով, Լյուբեկ քաղաքի բնակիչների մասին: Լարի Մասեթի «Trip to the Dentist» (<https://bit.ly/3utHP8J>) պատումն առաջին հայացքից ընդամենն ատամնաբույժի այցի մասին է, սակայն ցավագրկողների ազդեցության տակ հեղինակը տեղափոխվում և տեղափոխում է ունկնդրին իր հայուցիկնացիաների աշխարհ: Կիսավավերագրական, կիսաֆանտաստիկ նյութի օրինակ՝ NPR-ի ոսկեդարից:

- Զո Ֆրանկի մենախոսությունները («Joe Frank Forever») (<https://bit.ly/2PWVIm6>) հիշեցնում են գիտակցության հոսք համադրված երաժշտության հետ: «Невзоровские среды» (<https://echo.msk.ru/programs/neysredy/>). Իրապարակախոս Ալեքսանդր Նևգորովի քաղաքական վերլուծություններն են հումորով, երբեմն արսուրդին հասնող մտքերով համեմված:
- Յուրաքանչյուր սովորող ընտրում է որևէ ժանրով կամ ֆորմատով արված մեկ էպիզոդ, վերլուծում հեղինակի ընտրած ֆորմատը, փորձում գտնել այս հարցերի պատասխանները՝ որքանով է արդյունավետ ընտրված ֆորմատը թեմայի ներկայացման համար, որն է ստեղծագործական լուծումների վերաբերյալ ձեր գնահատականը, որքանով է փոդքասթը ծառայել իր նպատակին, գաղափարի իրագործման ինչ հնարավորություններ է կիրառել հեղինակը, պատմությունը ծայնի միջոցով ներկայացնելու ինչ միջոցներ օգտագործել և այլն:
- Դասավանդողը կարող է հանձնարարել ոչ միայն ընտրել տարածված ֆորմատներից մեկը կամ մի քանիսը և մեկնաբանել, այլև հորինել նորարարական լուծումներով աչքի ընկնող ձևաչափ: Նորարարական ձևաչափ է, օրինակ, «Բեդովլաթ» փոդքասթը, որի հեղինակը միախառնում է փաստավավերագրական ծայնագրությունները՝ դրանք դնելով գեղարվեստական նարատիվների մեջ:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Invitation: PRPD Benediction by Jay Allison,

<https://transom.org/2011/jay-allison-invitation-prpd-benediction/>

ନାଟୁ

3



ՁԱՅՆԱՅԻՆ ՊԱՏՄԱՍՈՒԹՅՈՒՆ (AUDIO STORYTELLING)

Փողքասթիամեն հաղորդում՝ էպիզոդ, առանձին, ինքնաբավ միավոր է՝ բացառությամբ աուդիոսերիալների: Էպիզոդի համար ոչ միայն պետք է լավ թեմա, այլև կոնկրետ պատմություն: Օրինակ, եթե դուք անում եք փողքասթ բնապահպանության մասին, յուրաքանչյուր էպիզոդի համար պետք է ունենաք բնապահպանական մեկ պատմություն կամ հարց/խնդիր: Օրինակ՝ «This American Life»-ի «Giant Pool of Money» էպիզոդում թեման ֆինանսական ճգնաժամն է, իսկ պատումի հարցը՝ ինչո՞ւ են բանկերը վարկեր տալիս տնտեսապես ոչ կայուն մարդկանց:

Պատումն ունենում է².

- *կոնֆլիկտ, որը հանգուցալուծվում է վերջում,*
- *հերոսներ, որոնք միշտ չէ, որ մարդիկ են (հերոս կարող է դառնալ, օրինակ, կրթական համակարգը և այլն):*
- *դրամատուրգիական կառույց՝ սկիզբ/նախաբան, զարգացում և վերջաբան/ավարտ:*

² Out on the Wire: The Storytelling Secrets of the New Masters of Radio; Jessica Abel

Պատումը կառուցելիս հաշվի է առնվում ոչ միայն ինֆորմացիայի փոխանցումը, այլև այդ փոխանցման ձևը: Պատմելու ձևերից են լարում (suspense) ստեղծելը: Լարումը օգտագործվում է տարբեր մեղիաներում՝ թատրոնում, կինոյում, գրականությունում, սակայն առավել լայն ուսումնասիրված է կինոյում, մասնավորապես Ալֆրեդ Հիչկոկը համարվում է լարում կերտելու մեծագույն վարպետը: Մյուս պատմասության ձևը «Հերոսի ուղին» մոդելն է, որով կառուցված են Հոմերոսի էպոսները, հուլիպոյան մի շարք ֆիլմեր, այժմ նաև փողքասթեներ: Հերոսի հետ ինչ-որ բան է պատահում, նա ինչ-որ որոշում է կայացնում, և վերջում մենք տեսնում ենք փոփոխությունը:

Պատմասության երրորդ հնարքը դիպուկ նկարագրությունն է, պատկերումը, որի շնորհիվ է պատմությունը տպավորվում և հիշվում է: Հիշվելու հնարքները հայտնաբերել են դեռ Անտիկ աշխարհում, դրանք Ցիցերոնն անվանում էր մնեմոտեխնիկա և այն համարում հռետորաբանության մաս: Այդ տեխնիկայով՝ ինֆորմացիան կոդավորվում է պատկերների և դրանց հարաբերության շնորհիվ: Համաձայն լեգենդի՝ այս վարժությունները սերտաժ պոետներից մեկը ի վիճակի է եղել ճանաչել շենքի փլուզման հետևանքով մահացած մարդկանց դիերը: Պոետը չէր ճանաչում նրանց, բայց հիշում էր՝ ով որտեղ է նստած եղել մինչև դժբախտ պատահարը³: Հիշվելու տեխնիկան օգտագործում են նաև թատրոնի դերասանները՝ իրենց խոսքի հատվածները կապելով բեմի դեկորացիայի հետ: Այժմ, երբ տեխնոլոգիաները հիշում են մեր փոխարեն, հիշողությունը զարգացնելու վարժություններն ակտուալ չեն: Սակայն այս պատումը շատ բան է ասում մարդկային գիտակցության մասին: Եթե ուզում եք, որ ձեր էպիզոդը հիշվի լսողի մոտ, հաշվի առեք մանրուքները և նկարագրությունները:

Պատմասությունը կիրառում են ոչ միայն ծայնային մեղիայում: Հայտնի պատմասության օրինակ է «Humans of New York» շարքը, որտեղ կիրառվում է լուսանկարի և տեքստի համադրություն: Այս շարքը ներկայացնում է անձնական պատմություն և ոգեշնչում ապրումակցել այդ պատմությանը:

³ The Art of Memory, Frances A. Yates

ՈՒՂԻՂ ԳԾՈՎ ՊԱՏՄՎՈՂ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



Սա ռադիոյով հեռարձակվող շատ պատմությունների կառուցվածքն է: Այն մեջբերումների շարք է մարդկանցից (ուղղահայաց գծեր), որոնք մեկնաբանում են միևնույն թեման (հորիզոնական գիծ). Նա ասաց, մեկ ուրիշը նկատեց, քննադատները համաձայն չեն և այլն: Այն ունի սկիզբ և ավարտ, բայց բավարար հիմքեր չի տալիս լսելը շարունակելու համար:

ՈՒՂԻՂ ԳԾՈՎ ՊԱՏՄՎՈՂ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՀԱՂՈՐԴԵՔ ԿՈՐՈՒԹՅՈՒՆ




«Planet Money» փողքասթում հեղինակները փորձում են առաջ քաշել կամ ընտրել մի հարց, որն ունկնդիրներին ուղեկցում է պատմության սկզբից մինչև ավարտը: Հարցը պետք է լինի այնպիսին, որ հետաքրքրի ունկնդիրներին: Դուք պետք է աստիճանաբար մոտեցնեք նրանց հարցի պատասխանին, որն անսպասելիության ու զարմանալու հնարավորություն կտա: Մտածեք այդ մասին որպես վաճառքի ենթակա մի բանի. դուք վաճառում եք ձեր պատմությունը լսարանին, նույնիսկ նրանց, ովքեր բացարձակ հետաքրքրված չեն թեմայով: Պետք է գրավեք և ստիպեք նրանց մինչև վերջ լսել ձեր պատմությունը:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԺԱՆԵՔ «ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»



Նույնիսկ ուժեղ հարցադրման դեպքում ունկնդիրը ցանկանում է ունենալ շարժման զգացողություն: Այդ պատճառով «ձայնային ճամփորդությունը» բաժանեք տեսարանների: Կարճ հաղորդումների համար կարող եք հետևել «երեքի կանոնին»՝ սկիզբ, ընթացք/միջևամաս և ավարտ/վերջաբան: Կամ «այցելեք» երեք տարբեր վայրեր: Սա ժամանակագրության պատրանք է ստեղծում և տալիս զգացողություն, որ ձեր պատմության մեջ, կարծես, ինչ-որ բան է կատարվել, անկախ նրանից, թե քանի րոպե է այն տևում:

ՁԵՐ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻՆ ՏՎԵՔ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐ



Եթե ունեք ինտաքսիքի պատմական կոր՝ շարժում ստեղծելու տեսարաններով, ապա թույլ մի՛ տվեք, որ ունկնդիրը մոլորվի: Ասեք նրան, թե ուր եք գնում և ինչու: Ցուցանակներն ուղղակիորեն ունկնդիրներին ասում են, թե ինչու պետք է շարունակեն լսել: Երբեմն ցուցանակները ձեր մեծ հարցը բաժանում են ավելի փոքր քայլերի (առաջին հերթին, մենք պետք է պարզենք դա, հետո դա անի ունկնդիրն արդեն մեր օգնությամբ): Ցուցանակները կարող են հիշեցնել այն, ինչ մենք գիտենք մինչ այժմ: Կամ դրանք կարող են օգնել ձեզ պատմության մեջտեղում Նոր հարցեր առաջ քաշել:

Նույն պատմությունը կարելի է ներկայացնել զանազան ձևերով, բայց գոյություն ունի ճայնային պատում կառուցելու առավել հայտնի, ընդունված ու կիրառելի մի քանի ձև:

This American Life

<https://www.thisamericanlife.org>

Հանրահայտ «This American Life» փոդքասթի հեղինակ և վարող Այրա Գլասը մշակել է պատմություն պատմելու յուրահատուկ կառուցվածք: Փոդքասթի էպիզոդը բաղկացած է մի քանի պատմությունից, որի առանցքը թեմատիկ ընդհանրությունն է: Յուրաքանչյուր պատմություն զարգանում է հետևյալ կերպ՝ հաջորդաբար տեղի է ունենում մի քանի իրադարձություն: Դրանց հաջորդում է ռեֆլեքսիա, մեկնաբանություն, թե ինչ նշանակություն ունեն այդ իրադարձությունները: «This American Life»-ն առանձնահատուկ է հենց այդ ռեֆլեքսիայի շնորհիվ, երբ հեղինակը կանգ է առնում և անդրադառնում նկարագրված դեպքերին: Այս փոդքասթի մեկ այլ յուրահատկությունն այն է, որ ոչ միայն ներկայացվում են իսկապես հետաքրքիր հերոսներ ու յուրահատուկ պատմություններ, վերլուծվում իրադարձություններ, այլև վերջում ունենդիրները լսում են, թե ինչ է դրանց մասին մտածում կամ զգում հենց ինքը՝ հեղինակը, ինչը թույլ է տալիս պատմությունը դարձնել ավելի անձնավորված ու հուզական:



All Things Considered

<https://www.npr.org/programs/all-things-considered/>


«All Things Considered» փողփասթն իր էպիզոդները սկսում է՝ ներկայացնելով հերոսին կամ հերոսներին գործողություն կատարելիս, օրինակ՝ տղերի մասին պատմության սկզբում մենք հանդիպում ենք մի կենսաբանի, ով աշխատում է Ռոդ Այլընդի անտառներից մեկում: Հերոսին ներկայացնելուց հետո էպիզոդն անդրադարձ է կատարում տղերի տեսակներին, լայն անունով հայտնի հիվանդությանը, որը տարածվում է տղերի միջոցով, ու նաև այդ ոլորտում արված վերջին հետազոտություններին:

Դրանից հետո ունկնդիրները Նորից վերադառնում են առաջին տեսարանում ներկայացված կենսաբանին: Հնարավոր է, որ ներկայացվի Նույն կենսաբանը շաբաթներ կամ ամիսներ անց, գուցե միանգամայն այլ հետազոտության վրա աշխատելիս: Ամեն դեպքում, էպիզոդի վերջում մենք վերադառնում ենք սկզբին և ավարտում պատմությունն այնտեղ, որտեղ սկսել էինք: Պետք է նկատել, որ, մարդու միջոցով թեման կամ խնդիրը «բացելը» արդեն վաղուց մեդիապատմություն կառուցելու հիմնական ձևաչափ է:

HEAR EVERY VOICE



50 Years
of NPR



Radiolab

<https://www.wnycstudios.org/podcasts/radiolab>

Հայտնի «Radiolab» փողքասթի կառուցվածքը հետևյալն է. այն սկսվում է մի փոքր պատմությամբ, որին հաջորդում է մեկ այլ ազդեցիկ պատմություն, այնուհետև՝ հաջորդը՝ շատ ավելի տպավորիչ բովանդակությամբ, քան նախորդը, և դուք ձեզ զգում եք «Ամերիկյան ոլորաններ» կարուսելին նստած՝ անընդհատ վեր գնացող ու զարգացող պատմության ունկնդիր: Դրան միանում են տարբեր ծայներ ու աղմուկներ, և ձեր ոգևորվածությունը քառապատկվում է: Իսկ երբ պատմությունը հասնում է իր գագաթնակետին, կարուսելը կարծես ներքև է սլանում, ու դուք չեք էլ հասցնում ուշքի գալ ու հասկանալ՝ ինչ կատարվեց, ու որտեղ եք հիմա:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Работа с сюжетом в нарративном подкасте

<https://bit.ly/2SNWIoP>

Ira Glass,

<https://transom.org/2004/ira-glass/>

Radiolab: An Appreciation by Ira Glass,

<https://bit.ly/3ggrwWo>

My Kingdom For Some Structure,

<https://bit.ly/3egDmQ5>

ԼՍԵԼՈՒ ՆՅՈՒԹԵՐ

Ira Glass on Storytelling, Politics and Finding Ones Creative Voice (Interview 1/2),

<https://bit.ly/2RQFC9h>

How To Add Structure To Your Podcast And Hook Your Audience,

<https://bit.ly/2QBeJp8>

Պատմասության վերաբերյալ նյութը կարելի է ներկայացնել տեսական մասում տրված փողքասթի էպիզոդները լսելով: Փողքասթի թեմատիկ-կառուցվածքային ձևաչափերից մեկը, օրինակ, կարելի է քննարկել՝ նախապես լսելով այդ ձևաչափով կառուցված որևէ էպիզոդ: Դասավանդողը կարող է հարցադրումներ անել՝ մղելով սովորողներին ինքնուրույն կողմնորոշվել ու հասկանալ, թե ինչ բնորոշիչ հատկանիշներ ունի տվյալ ձևաչափը, ինչ եղանակով է հեղինակը մոտեցել թեմային և այլն: Հաջորդ տեսակը կարելի է քննարկել այս կերպ. դասախոսը տալիս է մոդելի անվանումը, միասին լսում են երկու-երեք էպիզոդ (դրանցից մեկը, անշուշտ, այդ մոդելով է պատրաստված), այնուհետև ուսանողները փորձում են բնորոշել այն, թվել դրա առանձնահատկությունները:

Կարելի է նաև հետևյալ մեթոդով շարժվել (այս աշխատանքի հետ կապված որոշ նյութեր դասախոսն արդեն նախապես պետք է պատրաստած լինի). լսարանում ունկնդրում են փողքասթների՝ ներկայացված չորս ձևաչափերով մեկական էպիզոդ, առանց որևէ քննարկման կամ ակնարկների: Դրանից հետո դասախոսն ընթերցում է այդ էպիզոդներին հատուկ մեկական բնորոշում-սահմանում: Սովորողները պետք է որոշեն, թե կոնկրետ որ բնորոշումը որ էպիզոդին է վերաբերում:

Դասի վերջում կարելի է լսել փողքասթի մի էպիզոդ (դասավանդողը կարող է ընտրել կամ հաջողված, կամ անհաջող օրինակ, բայց առանց նախապես ուղղորդելու լսարանին) և քննարկել, թե ինչպես է հեղինակը զարգացրել թեման՝ ինչպես է այն սկսվում, ինչ ընթացք ունի և ինչպես է ավարտվում: Լսարանը փորձում է անցնել այն ճանապարհը, որն անցել է փողքասթի թիմը՝ մատնանշելով այն եղանակները, որոնք օգտագործվել են թեման զարգացնելիս:

Քննարկման առանձին նյութ կարող է դառնալ անհատի, հերոսի միջոցով թեման/խնդիրը «բացելու» մոտեցումը, ինչը, ընդհանուր առմամբ, ընկած է մերօրյա մեդիաձեռագրի հիմքում:

Այս թեմայի շրջանակում պետք է առանձին օրինակներով քննարկել նաև պատմասության նախաբանն ու վերջաբանը կառուցելու մոտեցումները՝ կարևորելով այն հանգամանքը, որ տեսալսողական նյութերը պետք է ունենան ուժեղ սկիզբ ու ավարտ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Սովորողներին առաջարկել ընտրել երեք թեմաներից մեկը (որտեղ է ապրում վախճ կամ ինչից եմ ես վախենում, ինչի համար եմ զղջում, ինչին այլևս չեմ հավատում), այս հարցերից մեկի շուրջ պատրաստել ծայնագրություն՝ ընտրելով այն ներկայացված կառուցվածքներից ու մոդելներից որն է մեկը: Ուսանողը պետք է պատրաստ լինի հիմնավորելու իր ընտրությունը:
- Առաջադրանքի տարբերակ. պատմել նույն պատմությունը քննարկված չորս կառուցվածքներով:

ԹԵՄԱ

4



ՁԱՅՆԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ՁԱՅՆԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Որակյալ ծայնագրություն ստանալու համար պետք է հաշվի առնել ծայնային միջավայրը, որտեղ այն իրականացվում է: Նույն ծայնը տարբեր վայրերում կարող է տարբեր հնչողություն ունենալ՝ եկեղեցի, ֆուտբոլի դաշտ, լոգարան, վերմակի տակ... Ձայնը չի արձագանքում փափուկ միջավայրում, զրույց ծայնագրելու համար ընտրեք այնպիսի տարածք, որտեղ կա փափուկ կահույք, գորգ, բարձեր, տարբեր իրեր, որոնք մեկուսացնում են արձագանքը:

Միջավայրը պետք է հաշվի առնել նաև այն պարզ պատճառով, որ ունկնդիրն իր հերթին լսելու է այն բնական միջավայրում՝ մեքենայի ղեկին, ամաններ լվանալիս, վազելիս և այլն: Այսինքն՝ ձեր ծայնագրության որակը և հետագա խմբագրումը պիտի լինեն բարձր որակի, որպեսզի կարողանան պահել լսողի ուշադրությունը:

Ձայները լինում են երեք տեսակի խոսք, երաժշտություն և բնաձայն (ambience)⁴: Խոսքը կոդավորված ինֆորմացիա է: Լեզուն հասկանալու համար պետք է իմանալ այդ լեզվի բառապաշարը, քերականությունը, կանոնները: Իսկ երաժշտության իմաստը կոդավորված չէ (embodied): Երաժշտությունը վերապրում են. ոչ մի գաղտնաբառ չկա երաժշտության և լսողի միջև: Երաժշտական էֆեկտների մեծ մասը պարունակում են և՛ լեզու, և՛ երաժշտություն: Օրինակ՝ գնացքի ձայնը. այն և՛ կող է պարունակում, և՛ երաժշտություն: Այս կիսաերաժշտություն-կիսալեզու ձայներն էլ կոչվում են բնաձայն: Ձայնագրելուց պետք է հաշվի առնել, որ բնաձայները հաճախ հասկանալի են միայն կոնտեքստում: Եթե աուդիոնյութում օգտագործվում է բնաձայն, հեղինակը պիտի ապահովի մեկնաբանություն՝ իր կամ հերոսների խոսքով:

⁴ Ambience բառից է. անգլերենից թարգմանաբար նշանակում է միջավայր, մթնոլորտ:

Հարցնել սովորողներին՝ ո՞ր ծայներն են հիշողություններ ու տարբեր ասոցիացիաներ առաջացնում իրենց մոտ: Նկատել՝ արդյո՞ք դրանք խոսք են, երաժշտություն, թե աղմուկ: Լսել Apocalypse now (հայերեն՝ Ապոկալիպսիսը հիմա) ֆիլմից «Ride of the Valkyries» հատվածը (<https://bit.ly/3grUEMR>) և «դուրս բերել» բոլոր ծայնային տարրերը՝ Վազների սիմֆոնիան, ուղղաթիռի ծայնը, կրակոցները, պայթյունը, երկխոսությունը, բղավոցները... Վալտեր Մուրչի հոդվածում ֆիլմի ծայնային ռեժիսորը պատմում է, թե ինչ սկզբունքով են խմբագրել բոլոր ծայները (<https://transom.org/2005/walter-murch/>):

Դասավանդողը կարող է կատարել վարժություն, որը կօգնի հասկանալ, թե որքան կարևոր են այն ծայները, որոնք «շրջապատում են» մեզ ամենուր: Վարժությունը պատկերացում կտա միտումնավոր լսելու (listening) և ակամայից լսելու (hearing) տարբերության մասին: Դասավանդողն առաջարկում է փակել աչքերը հինգ րոպեով և կենտրոնանալ միայն լսարանի ծայների վրա: Ո՞վ և ի՞նչ է լսում: Սովորողները կնկատեն, որ կան որոշ ծայներ, որոնք մենք չենք նկատում: Խոսքն այս դեպքում բնական աղմուկի մասին է: Օրինակ, քաղաքի բնակիչը սովորում է երթևեկության աղմուկին, և այն ժամանակի հետ վերջինիս համար դառնում է անորսալի: Կարելի է նաև քննարկել, թե ինչ ծայներ են ուշադրություն գրավում: Վարժության իմաստը հետևյալն է. համոզվել, որ մարդու տեսողությունն ամենադոմինանտ զգայարանն է: Տեսողությունը համարյա անխոչընդոտ մարսում է, օրինակ, թվերով առատ տեքստը, ինչը լսողությամբ «ընդունելու» դեպքում կառաջացնի ընկալման խոչընդոտ ունկնդրի մոտ: Չէ՞ որ լսելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել՝ ականջը սրել: Լսողությունը դոմինանտ զգայարանը չէ, սակայն առաջինն է ձևավորվում՝ բոլոր զգայարաններից առաջ: Գրավիչ աուդիոարտադրանք թողարկելու ճանապարհին շատ կարևոր է իմանալ՝ ինչպես աշխատել ծայնային տեսակների հետ այնպես, որ այն օգնի զարգացնելու թեման ճշգրիտ ու հետաքրքիր ձևով:


ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Պատրաստել մինչև երկու թույլ տևողությամբ moodboard՝ «տրամադրության երիզ», այսինքն՝ ձայնագրել կամայական ձայնի տեսակ կամ տեսակներ, խմբագրել դրանք այնպես, որ արտահայտի որոշակի տրամադրություն: Տեղադրել «տրամադրության երիզը» Google Drive-ում՝ առանց տրամադրության մասին մակագրության: Տրամադրությունը պետք է գուշակեն սովորողները դասի ժամանակ:
- Վերցնել հարցազրույց սիրած երգի մասին: Զրուցակցի խոսքը խմբագրել՝ ֆոնում դնելով այն երգը, որի մասին վերջինս պատմում է: Այս վարժություն անելուց առաջ օգտակար կլինի լսել «Song exploder» փողքասթը, որտեղ հայտնի երաժիշտները ներակայացնում են մի երգի ստեղծման պատմությունը (<https://songexploder.net/>):

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Sonic IDs - <https://transom.org/2013/sonic-ids/>

Դիտել սաունդ արտիստ Զոն Քեյջի մասին պատմող Documentary John Cage, Journeys in Sound «Ճամփորդություններ ձայնով» վիաստագրական ֆիլմը: ([*Documentary John Cage, Journeys in Sound*](#)):



ԹԵՄԱ



5



ՁԱՅՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՁԱՅՆԻ ԴԵՐԸ ԱՌԴԻՈՊԱՏՈՒՄՈՒՄ)

Փողքասթում հաճախ օգտագործվում են զանազան ձայնային էֆեկտներ՝ յուրօրինակ բացման կամ, օրինակ, փողքասթի մի հատվածից մյուսին անցում կատարելու համար: Եթե ձեր փողքասթում կենտրոնական տեղ է զբաղեցնում պատումը, ապա կարող եք օգտագործել այնպիսի ձայնային էֆեկտներ, ինչպիսիք են՝ շրջակա միջավայրի ձայներն ու ֆոնային աղմուկը՝ տեղանքի բնական, կենդանի պատկերը փոխանցելու նպատակով: Աշխատեք ինքներդ ձայնագրել այն ձայները, որոնք ուզում եք օգտագործել ձեր փողքասթում: Եթե ձեզ անհրաժեշտ է, ենթադրենք, ամպրոպի, քամու, դռան ճռճոցի կամ խոսակցության ձայն, նախընտրելի է ոչ թե համացանցում որոնել, այլ փորձել ձայնագրել:

Radiolab-ը ամենատարածված փողքասթներից մեկն է, որը ձայնային էֆեկտների կիրառումը հասցրել է արվեստի մակարդակի: Հաղորդավարներն անդրադառնում են տարբեր թեմաների՝ օգտագործելով տարատեսակ ձայնային էֆեկտներ, ինչպիսիք են՝ ժամացույցի սլաքների ձայնը կամ շան հաչոցը՝ ունկնդրի ուշադրությունը գրավելու նպատակով:



Կարևոր է ծայներ օգտագործելիս չխախտել հեղինակային իրավունքները: Կան կայքեր, որտեղ երաժշտությունը տարածվել է ազատ օգտագործման իրավունքով (Creative (Creative Commons): Այսպիսի կայքերից են՝

[Freesound.org](https://freesound.org)

[Freesoundeffects.com](https://freesoundeffects.com)

99sound.org

[Soundbible.com](https://soundbible.com)

[Soundgator.com](https://soundgator.com)

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԴՔԱՍԹՈՒՄ

Որպես պատմող՝ ձեզ վստահված է մարդկանց այնպիսի վայրեր տեղափոխել, որտեղ նրանք գուցե երբեք չեն եղել: Եթե բավականաչափ զգույշ ու զգոն չլինեք, ապա կարող եք ծեծված կամ կլիշե երաժշտությամբ մարդուն կամ վայրը ներկայացնել ձանձրալի ձևով:

ՄԻ ՔԱՆԻ ԿԱՆՈՆ

1. Մի՛ խոսեք ծայնային էֆեկտի մասին՝ դրանից առաջ: Ֆուտբոլային խաղի մասին ռեպորտաժում մի՛ ասեք՝ «Յետո հնչեց երկրպագուների սուլոցը»՝ սուլոցի ծայնն օգտագործելուց առաջ:
2. Բառացի մի՛ բացատրեք ծայները: Օրինակ՝ եթե դուք խոսում եք գիտնականի հետ, ով պատմում է, թե ինչպես են պարարտանյութերն ազդում գորտերի վրա, մի՛ օգտագործեք գորտի կոռոց: Այսպիսի կլիշեներից խուսափելը կանոն է, բայց ինչպես շատ չգրված կանոններ, այն ևս կարելի է խախտել: Բայց պետք է նախ ճանաչել կանոնները, որպեսզի իմանանք՝

ինչ ենք խախտում և ինչու: Փորձարկեք և տեսեք ինքներդ՝ ինչն է աշխատում: Պարզապես հիշեք, որ շատ բառացի լինելը լսողին գրկում է իր գործից՝ մտածել և մասնակցել պատումի ստեղծմանը երևակայությամբ:

ԱՐԴՅՈ՞Ք ԻՄ ՓՈԴՔԱՍԹՆ ՈՒՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ

Կան հրաշալի փողքասթներ, որոնք երաժշտություն առհասարակ չեն օգտագործում: Երաժշտության օգտագործումը միշտ պետք է լինի մտածված: Եթե ուշադիր չլինեք, ապա կարող եք լավ պատմությունը երաժշտության սխալ ու ոչ տեղին կիրառությամբ վերածել խառնաշփոթի: Պետք է նաև փաստել, որ լավ մտածված ու ճիշտ տեղում կիրառված երաժշտությունը պատմությանը կարող է հաղորդել հուզականություն ու խորություն: Երաժշտական գրագետ ձևավորումը իմաստային հավելյալ լիցք կարող է հաղորդել պատումին՝ ընդգծելով այս կամ այն դրվագը (ստորև ավելի մանրամասն կանդիդատանք դրան): Ձեր փողքասթում երաժշտության արդյունավետ օգտագործման համար լավ կլինի՝ ճանաչեք ձեր լսարանը: Եվ չպետք է մոռանալ մի շատ կարևոր պահանջ. երաժշտությունը պետք է համապատասխանի ձեր փողքասթի բնույթին և տրամադրությանը:

ԲԱՑՄԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (INTROS)

Երաժշտություն օգտագործելու պահանջ ու ցանկություն առաջանում է նախևառաջ էպիզոդի բացման ժամանակ: Սովորաբար ներածությունների տևողությունը 15-ից 30 վայրկյան է, և ճիշտ այնպես, ինչպես գրքի կամ հոդվածի առաջին պարբերությունը, երաժշտությունը նույնպես օգտագործվում է ունկնդրի ուշադրությունը որսալու համար: Ցանկությունը մեկն է՝ գրավել ու պահել ունկնդիրներին: Ձեր հանդիսատեսը պետք է անջատի ամեն ինչ և լսի ձեզ:

ՈՐՊԵՍ ԲԱԺԱՆԱՐԱՐ

Երաժշտությունը կարելի է օգտագործել որպես բաժանարար: Ձայնային ճամփորդության ընթացքում այն կարող է օգնել «կետադրել» պատմության հիմնական պահերն ու անցումները՝ նախաբանից միջնամաս ու միջնամասից վերջ: Երաժշտությունը դառնում է այնպիսի անցումային նշան, ինչպիսին է, օրինակ, նոր գլուխը՝ գրքի կամ մարումը՝ (fade-out) ֆիլմի համար:

Երաժշտությունը կարող է նաև ստեղծել անորոշություն և սպասում: Գրքերի գլուխների վերջում միշտ կա խայծ, որը ստիպում է ընթերցողին արթուն մնալ ու կարդալ մինչև ուշ երեկո: Երաժշտությունը փողփայտում կարող է ունենալ նմանատիպ ազդեցություն ու ստիպել, որ շարունակեն լսել:

ՖՈՆԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Բոլորը սիրում են լավ ֆոնային երաժշտություն, բայց գլխավոր խնդիրն այն է, որ երաժշտությունը չգերակշռի, այլ տարածություն ստեղծի, որ առաջին պլան գա բովանդակությունը: Մտածեք երաժշտության մասին որպես կետադրության: Այն կարող է շրջանակել բովանդակությունը և ուղղորդել ունկնդիրներին, թե ինչպես իրենց զգան տվյալ պահին: Բայց զգույշ եղեք: Օգտագործեք պարզ ու մաքուր երաժշտություն: Կարևոր պահերը կարող են ուղեկցվել մեկ գործիքով ստեղծված երաժշտությամբ՝ տեղ թողնելով հանգիստ մտորումի համար: Կարիք չկա մեծ երաժշտական խմբի բազմաձայն հնչողություն օգտագործել, որի առկայությունը պարզապես կարող է շեղել ունկնդիրներին:

ՓԱԿՄԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (OUTRO MUSIC)

Ինչպես ներածական երաժշտությունը բացում է փողքասթը, այնպես էլ outro-ն՝ փակման երաժշտությունը, եզրափակում է այն: Որոշ փողքասթերներ սիրում են օգտագործել նույն երաժշտությունը, որն օգտագործել են ներածության ժամանակ, բայց ավելի ցածր, ավելի հանգիստ, մարող մակարդակով, որպեսզի հաղորդման վերջում ունկնդիրների մոտ զգացմունքային ծանրաբեռնվածություն չառաջանա: Ոմանք սիրում են տարբեր երաժշտություն օգտագործել ու վերջի համար կիրառել այնպիսի մի բան, որը հստակորեն կհուշի էպիզոդի ավարտի մասին:



ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դասախոսը կարող է իր ընտրությամբ ներկայացնել տարբեր ծայներ՝ բնական աղմուկ, երաժշտություն, իսկ ուսանողները որոշեն, թե ինչ կոնտեքստում և ինչպես դրանք կարող են օգտագործվել: Կարելի է նաև լսել փողքասթի առանձին էպիզոդներ և քննարկել երաժշտական ձևավորման առանձնահատկությունները՝ փորձելով հասկանալ, թե ինչու և ինչ նպատակի համար է հեղինակը օգտագործել այս կամ այն երաժշտությունը, և արդյոք հաջողվել է նրան երաժշտական ձևավորմամբ էմոցիոնալ լիցք հաղորդել պատումին, թե ոչ:

Քննարկման նյութ կարող են դառնալ ծայնային էֆեկտներ կիրառելու ռիսկերը՝ ինչից է անհրաժեշտ խուսափել երաժշտություն ընտրելիս. օրինակ, շատ օգտագործված, ակնհայտորեն այլ ասոցիացիաների, իրադարձությունների, դեպքերի հետ կապված երաժշտական հատվածներից կամ երգերից, որոնց բառերը կարող են շեղել նյութի բուն խոսքից, երգի ծագման և կատարման քաղաքական կոնտեքստի անտեսումից և այլն: Երաժշտական ստեղծագործությունների հեղինակային իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը, այդ իրավունքները խախտելու հետևանքները ևս պետք է քննարկել:

ԼՍԵԼՈՒ ՆՅՈՒԹԵՐ

A photo I love,

<https://n.pr/3rRgfR0>

Lullaby (feat. Colin Dexter) [Third Coast Festival, 2013-10-19,

<https://bit.ly/3sSZtSH>

Make a Great Podcast Intro,

<https://bit.ly/2Q1D4nW>

How to create podcast intro and outro,

<https://bit.ly/3wv3CyD>

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Using Music: Jonathan Menjivar For This American Life,

<https://bit.ly/3mkS5gp>

A Complete Guide to Adding the Perfect Music and Sound Effects to Your Podcast,


<https://bit.ly/3fHdqiR>

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Նախորդ դասերին արված ձայնագրությունները կամ ամբողջական պատումները քննարկել փոքր խմբերում՝ այս անգամ արդեն ձայները կիրառելու դիտանկյունից: Ի՞նչ ձայնային էֆեկտեր կարելի է ավելացնել՝ ձեր նյութի պատկերայնությունը հարստացնելու համար: Քննարկումից հետո խմբագրել նյութը՝ օգտագործելով ձայնային էֆեկտներ:

ԹԵՄԱ

6



ՁԱՅՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Դաշտային ձայնագրությունները նյութ հավաքելու կարևոր փուլ են: Այստեղ պետք է հաշվի առնել ձայնային միջավայրը և ձայնագրիչի դիրքը. որքանով է ձայնագրման գործիքը թիրախավորում ձայնային աղբյուրը (signal to noise ratio): Նախորդ դասին քննարկվել է, որ ամեն տեղանք կամ սենյակ ունի իրեն բնորոշ ձայները: Հեղինակն իր ձայնագրիչի դիրքով է որոշում՝ որ ձայնն է առաջնային, որը՝ միջավայրային: Եթե ձայնագրվում է խոսք, ձայնագրիչը պետք է պահել խոսողին հնարավորինս մոտ, եթե ձայնագրվում է դռան ձայն, անհրաժեշտ է պահել ձայնագրիչը դռան մոտ: Ձայնագրիչի դիրքը նույնքան կարևոր է, որքան ֆոտոապարատի դիրքը՝ լուսանկարչության մեջ: Ականջն ու ձայնագրիչը տարբեր բարձրություններ կարող են լսել, ուստի ականջակալներ դնելով՝ պետք է ստուգել ձայնագրվող նյութի ձայնի բարձրությունը: Պրոֆեսիոնալ ձայնագրիչներն ունեն երկու բարձրություն՝ մեկը՝ միկրոֆոնի (MIC Level), մյուսը՝ ականջակալի (Volume): Հարկավոր է լինել ուշադիր և կոճակով կառավարել ձայնագրության բարձրությունը:


Ձայնագրման փուլը կարևոր է, քանի որ որոշ թերություններ անհնար է ամբողջությամբ շտկել մոնտաժի փուլում:

Պրոֆեսիոնալ ձայնագրիչի միջոցով ձայնը կառավարելի է դառնում բոլոր կողմերից. այն որսում է ձայնն իր ողջ հարստությամբ ու շերտերով: Հեռախոսն ի վիճակի չէ ձայնագրել ամեն ինչ. եթե գրույցի ընթացքում դուք թեքում եք գլուխը որևէ ուղղությամբ, այն չի կարող նույն որակի ձայն ապահովել, ինչ միկրոֆոնը, որն ունի ամեն կողմից ձայնն ընկալելու հնարավորություն: Բավական է համեմատել միկրոֆոնը պրոֆեսիոնալ տեսախցիկի հետ, որն ի զորու է ֆիքսել դեմքի յուրաքանչյուր դետալ: Նույնը միկրոֆոնի դեպքում է՝ այն կլանում է ձայնն իր ողջ գեղեցկությամբ և, այո, երբեմն նաև՝ թերություններով: Բայց քանի որ պրոֆեսիոնալ միկրոֆոններն ունեն տարբեր գործառնություններ, դուք կարող եք կառավարել ձայնն այնպես, ինչպես ճիշտ եք գտնում:

Ձայնագրիչի միջոցով դուք կարող եք ընտրել ձայնագրման երկու տարբերակ.

- մոնո (օգտագործվում է ձայնագրման մեկ ալիք)

Մոնո աուդիոն մեկ ալիքի վրա ձայնագրված ձայնն է: Այսինքն, եթե ձայնագրությունն արվել է մոնո տարբերակով, ապա, ականջակալներով թե առանց, լսողը մեկ ալիքից եկող ձայն է ունենալու:



- ստերեո (օգտագործվում է ձայնագրման երկու ալիք)

Ստերեո ձայնագրության ժամանակ երկու ականջակալներից իրար հետ ներդաշնակ համադրված, բայց տարբեր ձայներ են լսվում: Ստերեոյի առավելությունը մոնոյի նկատմամբ այն է, որ լսողի մոտ տպավորություն է ստեղծվում, թե ձայնային ալիքներն աջ ականջից ձախ են շարժվում շատ սահուն:



Ստերիոֆոն տեխնոլոգիան ստեղծել է Ալեն Բլումբերգը, 1930-ականներին: Ստերեո ձայները թույլ են տալիս տեղորոշել իրերի միջև եղած հեռավորությունը տարածության մեջ:

Կարգավորումը պետք է ընտրել ըստ անհրաժեշտության: Հարցազրույցի դեպքում նախընտրելի է ձայնագրել մոնո, որպեսզի հենց խոսողի ձայնը գրեք, բնության ձայներ, բնական աղմուկ, որևէ ձայնային տեսարան ձայնագրելու դեպքում՝ ստերեո, քանի որ թիրախավորում եք մի քանի ձայն: Եթե ձայնագրում եք խոսք, բայց նաև ուզում եք ֆոնային աղմուկը ներառել, փորձեք ստերեո տարբերակը, ինչը, իհարկե, շատ ավելի կենտրոնացում է պահանջում տեղում, այնպես որ, կայուն պահեք միկրոֆոնը: Սմարթֆոնով ձայնագրությունը միշտ մոնո է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լսարանում լսել մի քանի ձայնագրություն և համեմատել ձայնագրության տիպերը:

Orson Welles, War of the Worlds, <https://bit.ly/3sC6ZAs>,
(մոնոձայնագրություն ստոդիայում)

Firesign Theater, <https://bit.ly/3dA2gef>, (մի քանի թրեքից
(ձայնագրության դաշտ) կազմված ստերեո ձայնագրություն)

Լսել Ալվին Լուսիերի «I am Sitting in a Room» ձայնագրությունը (<https://bit.ly/3rVu2pr>), քննարկել այն. նույն խոսքը վերաձայնագրվում է իրար վրա՝ նույն սենյակում, արդյունքում բառերը գրեթե անհասկանալի են դառնում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Կատարել երեք ձայնագրություն՝ խոսք, երաժշտություն և բնական, ֆոնային աղմուկ: Մոնոաժել երեք ձայնագրությունները և դարձնել երկու թույլ տևողությամբ MP3 ֆայլ:
- Ուսումնասիրել ձայնի ֆիզիկական կառուցվածքը <https://www.physicsclassroom.com/class/sound> կայքում (առաջին և երկրորդ դասերը): Հաջորդ դասի համար յուրաքանչյուրը պատրաստում է զեկույց ձայնի ֆիզիկական հատկություններից մեկի մասին՝ բարձրություն, հաճախականություն, արձագանք, տատանում: Անհասկանալի մնացած հարցերը քննարկվում են լսարանում:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Should I Or Shouldn't I: Recording In Stereo,
<https://bit.ly/3v5iW30>



ᐱᑦᑭᑦᑭᑦ

7



ՓՈԴՔԱՍԹ-ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Զրույցը, երկխոսությունը մարդկանց միջև փոխհարաբերության հիմնական ձևն է: Զրուցելով մարդիկ փոխազդում են միմյանց, հարցեր են տալիս և պատասխանում դրանց: Զրույցի միջոցով մենք ճանաչում ենք այլ մարդկանց, նրանց ապրումները, զգացմունքներն ու հույզերը և այն աշխարհը, որտեղ նրանք ապրում են: Իրավիճակով պայմանավորված՝ զրույցը կարող է ունենալ տարատեսակներ՝ կենցաղային, գրական, մասնագիտական և այլն:

Պրոֆեսիոնալ երկխոսություն վարելու հիմնական կանոնները գործում են նաև հարցազրույցի ֆորմատով պատրաստվող փողքասթերում: Փողքասթեր-հարցազրուցավարի գործառույթն է լիարժեք ուսումնասիրել թեման, լավ ճանաչել հերոսին՝ պահպանելով զրույց վարելու տեխնիկական, ստեղծագործական, էթիկական պահանջերը: Որպես հարցազրուցավար՝ ձեր դերն է միջնորդ հանդիսանալ զրուցակցի և լսարանի միջև: Անհրաժեշտ է գիտակցել, որ ամենակարևորը զրուցակիցն է և նրա ասելիքը (ոչ թե դուք): Ձեր զրուցակցի «ձայնն» է, որ լսարանը ցանկանում է լսել, իսկ դուք ամեն ինչ պետք է անեք, որպեսզի այդ ձայնը փոխանցի ասելիքը, ինչպես նաև այն միջավայրը, որտեղ այդ ասելիքը ձևակերպվել է: Իհարկե փողքասթն այստեղ ևս մեծ ազատություն է տալիս հեղինակին՝ թույլ տալով նրան դուրս գալ ժանրի ավանդական սահմաններից, նորարարական մոտեցումներ կիրառել փողքասթի բովանդակությունն ու ձևաչափը մշակելիս: Պետք է նկատել նաև, որ լրագրողական երկխոսություններն էլ այսօր նոր մոտեցումներ են որդեգրել, դարձել շատ ավելի նատուրալիստական. հեղինակն առավել անկաշկանդ է զրույցը սկսելու, զարգացնելու և այն ավարտելու փուլերում, փոխվել է հարցադրումների ռիթմիկան: Իհարկե այս առումով փողքասթի հեղինակը շատ ավելի մեծ ազատություն ունի:

Ձեր՝ որպես գրուցակից-հեղինակ-միջնորդ նախընտրություններն են ստեղծում երկխոսական բնույթի փոդքասթի բովանդակությունը, կոնտեքստավորում այն, տալիս դրան «համ ու հոտ», իսկ հարցադրումներից, հեղինակային տեքստից ու հատկապես մոնտաժի արդյունքում է ձևավորվում ձեր փոդքասթի ուղղվածությունը, լեզուն և ոճը: Այդպես, ժամանակի ընթացքում կձևավորվի ձեր լսարանը, որը հաղորդակից և համակիր կլինի այդ բովանդակությանը և ոճին: Կարևոր է գիտակցել, որ իսկզբանե նյութն ուսումնասիրելուց մինչև դրա վերջնական թողարկումը՝ թեմայի և գրուցակցի ընտրություն, հետազոտություններ, հարցաշարի ձևակերպում, բուն գրույց, նյութի վերլուծություն և ամփոփում, մոնտաժ, դուք պարտավոր եք հարազատ մնալ ձեր որդեգրած ոճին և բովանդակությանը՝ պահպանելով այն վստահությունը, որն անհրաժեշտ նախապայման է ցանկացած հաջողված փոդքասթի համար:

ՀԱՐՑԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Վստահությունը կարևորագույն դեր է խաղում հաջողված հարցազրույց ունենալու գործում: Այն, սակայն, ձևավորվում է հարցազրույցին պատշաճ կերպով նախապատրաստվելու դեպքում. այո, նախապատրաստվելը հարցազրույցի հաջողության թիվ մեկ գրավականն է, ինչը ենթադրում է նաև հարցադրումների հստակություն, գրուցակցին լսելու կարողություն և ճիշտ տեղում ճիշտ հարց հնչեցնելու հմտություն: Հարցաշարը մշակելիս հարկ է հիշել հարցերի հետևյալ տեսակների մասին, որոնց գրագետ կիրառումը կնպաստի վստահության մթնոլորտի ստեղծմանն ու ամրապնդմանը: Իհարկե հարցաշարը կարևոր է, բայց այն չպետք է դառնա գրուցավարին կառավարող գործիք. վերջինս այնքան լավ պետք է տիրապետի նյութին, որ հարկ եղած դեպքում կարողանա, օրինակ, պատասխանից նոր հարցեր բխեցնել, ճշգրտող հարցեր տալ կամ առանց հյուրի խոսքը կոպտորեն ընդհատելու տեղափոխել նրան այլ թեմատիկ տարածք:

ԲԱՅ ՀԱՐՑԵՐ

Նախընտրելի է ձևակերպել բաց հարցեր, որոնք թույլ են տալիս զրուցակցին սեփական բառերով պատասխանել: Հարցը պետք է ձևակերպված լինի պարզ և հասկանալի բառերով, որ ձեր զրուցակիցն իրեն անհարմար չզգա ինչ-որ բան չիմանալու պատճառով, հակառակ դեպքում դա կբերի նրան, որ նա կսկսի ինքնապաշտպանվել: Օրինակ՝ խնդրանքը ձևակերպելիս ասել, ոչ թե՝ «Ես մի քանի հարց ունեմ», իսկ զրուցակիցն էլ մտածի՝ «Բա որ չկարողանամ պատասխանել», այլ՝ «Ես կուզեի ձեզ հետ մի քանի հարց քննարկել», ինչն առավել նպաստավոր պայմաններ կստեղծի զրույցի ծավալման համար:

Հարցը պետք է պարունակի մեկ իմաստ՝ յուրաքանչյուր հարցում մեկ մտքից ավելի չպետք է լինի: Օրինակ՝ «Ի՞նչը և ինչպե՞ս է փոխվել ձեր կյանքում մինչև արտասահման մեկնելը, և ի՞նչ պլաններ ունեիք այդ տարվա համար» հարցը իրականում երեք հարց է պարունակում՝ ինչը, ինչպես և ինչ պլաններ: Հասկանալի չէ, թե որ մեկին է վերաբերելու պատասխանը: Այս դեպքում մեծ է հավանականությունը, որ ձեր զրուցակիցը նախ՝ չի իմանա՝ ինչից սկսել, երկրորդ՝ կտա ոչ լիարժեք պատասխաններ և, ի վերջո, հնարավորություն կունենա խուսափելու այն հարցից, որն այնքան էլ իր սրտով չէ, ինչից հետո դուք ստիպված եք լինելու կրկնել հարցը կամ հարցերը:

ԴԵՐԱՅԻՆ, ԻՄԻՏԱՑԻՈՆ ՀԱՐՑԵՐ

Այս տեսակի հարցերն օգտագործվում են զրուցակցի համար «անհարմար» թեմաների վերաբերյալ հարցադրումներ անելիս: Դերային իմիտացիան հնարավորություն է տալիս խուսափել զրուցակցի հնարավոր ինքնապաշտպանական արձագանքից: Հարցը պետք է ձևակերպել այնպես, ասես ձեր փոխարեն մեկ ուրիշն է այն հարցնում՝ օգտագործելով, «Ենթադրենք», «պատկերացնենք» բառերը... Օրինակ՝ ուղիղ հարցի փոխարեն՝ «Ինչպե՞ս էիք դուրս հանում գործարանի պատրաստի ապրանքը», հարցրեք՝ «Եթե մեկը, ում դուք վստահում եք, ձեզ հարցներ՝ ինչպե՞ս գործարանից դուրս հանել պատրաստի ապրանքը, ի՞նչ կպատասխանեիք»:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Անցումային հարցերը, որպես կանոն, ոչ թե հարցական նախադասություններն են, այլ միջանկյալ արտահայտությունները, որոնք օգտագործվում են մի թեմայից մյուսը սահուն անցնելու նպատակով և հնարավորություն են տալիս հարցաշարի մի բլոկից անցնել մյուսին: Օրինակ՝ «Մենք զրուցեցինք ձեր ընտանիքի մասին, հիմա եկեք ծանոթանանք հարևանությանը»: Հմտորեն ձևակերպված անցումային հարցերը նաև օգնում են ճիշտ տեղում ընդհատել զրուցակցին, որը, հնարավոր է, շատ է շեղվել հարցից ու ծավալվել է: Երբ զգում եք, որ հյուրը շատ է խորացել՝ պատմելով իր ծննդավայրի մասին, և նրան պետք է սահուն ետ բերել, ապա «1995-ին դուք վերադարձաք մայրաքաղաք: Ի՞նչ եղավ դրանից հետո» հարցը նրան կարող է հետ բերել զրույցի հիմնական թեմային՝ առանց տհաճ զգացողություններ հաղորդելու և առանց վնասելու փոխվստահության մթնոլորտը:

ՃՉԳՐՏՈՂ/ՃՇՏՈՂ ՀԱՐՑԵՐ

Ճշտող կամ ճշգրտող են կոչվում այն հարցերը, որոնք ուղղված են մանրութները պարզելուն՝ «Ե՞րբ դա տեղի ունեցավ», «Էլ ի՞նչ էր ներկա» և այլն: Սա նաև հնարավորություն է՝ ցույց տալու, որ այս թեման ձեզ հետաքրքիր է, և կա ցանկություն այն ավելի լավ հասկանալու և պատկերացնելու: Նույն նպատակին են ծառայում նաև գլխով համաձայնության նշան անելը, հաստատող ծայնարկությունները, ուղիղ խնդրանքը՝ «Այդ մասին ավելի մանրամասն չէ՞ք պատմի»:

Երբեք չսևեռվեք մի հարցի վրա: Մեկ-երկու անհաջող փորձերից հետո լավ կլինի անցնել այլ թեմայի՝ չշեշտելով, որ այս թեմայից այդպես էլ չիմացաք ձեր ուզածը: Գրտող հարցերն օգնում են զրուցավարին մի կարևոր հարցում ևս. երբ զգում եք, որ հնարավոր է՝ զրուցակցի այս կամ այն մեկնաբանությունը կամ որևէ խնդրի շուրջ տրված տեղեկությունը լիարժեք չընկալվի լսարանի կողմից՝ թողնելով անորոշության զգացողություն կամ թյուրըմբռնում, կարող եք տալ, օրինակ, նման հարց՝ «Այսինքն՝ դուք նկատի ունեք, որ այս դեպքում դիմորդը հնարավորություն չի ունենալու...» և ավարտել միտքը՝ թեմայից ու կոնկրետ փաստերից կախված:

Զրույցի բովանդակությունից ելնելով՝ կարող է ձեռքի տակ թուղթ պահելու անհրաժեշտություն առաջանալ՝ ազգակցական կապերը գծագրելու, ծննդյան թվերը գրանցելու, տեղանունները, անունն ու ազգանունը հստակեցնելու համար:


ՄԻ ԶԱՆԻ ԽՈՐՀՈՐԴ ԶԱՐՑԵՐԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼԻՍ

- Ցուցաբերեք իրական հետաքրքրվածություն. հարցազրույցի ողջ ընթացքում պետք է ակտիվորեն հետաքրքրված լինել զրուցակցով և նրա թեմայով: Վերաբերմունքը, դեմքի արտահայտությունը, ձայնարկությունները, ժեստերը պետք է լինեն տրամադրող, բացող, վստահություն ներշնչող, իսկ զրուցակիցը պետք է զգա, որ դուք իրականում հետաքրքրված եք իր պատմությամբ:
- Դրսևորեք չեզոքություն (դեմքի արտահայտություն, ձայնարկություն, ժեստեր). զրուցակիցը պիտի զգա, որ ինքն ինչ էլ ասի, չի դատապարտվելու:
- Օգտագործեք ամփոփումներ, որոնք հնարավորություն են տալիս զրուցակցին համոզվելու, որ նրան ուշադիր են լսել:
- Օգտագործեք ուշադրությունը կենտրոնացնող նախաբաններ, ինչպես, օրինակ՝ «Իմ հաջորդ հարցը հատկապես կարևոր է մեր ծրագրի համար»: Սա հնարավորություն է տալիս ավելի ակտիվ մասնակցել զրույցին՝ առանց արժեքային գնահատականներ հնչեցնելու:
- Ցանկալի է՝ մինչև հաջորդ հարցը տալն ընդմիջումներ անել՝ հնարավորություն ընձեռելով զրուցակցին ինքնուրույն ընտրելու զրույցի հաջորդ թեման: Օրինակ՝ մինչև հարց տալը մտքում հաշվել մինչև հինգը:

- Վարժություն դասի ընթացքում: Սովորողները բաժանվում են զույգերի, նստում իրար դիմաց մեկ մետր հեռավորությամբ: Զույգից մեկի առաջադրանքն է պատմել մի պատմություն իր մասին և խոսել 10 րոպե: Մյուսի անելիքն է լսելը՝ առանց դիմախաղով կամ որևէ ժեստով ընդհատելու խոսողին և էմոցիաներ ցույց տալու: Վարժությունը ցույց է տալիս, որ խոսակցությունն ունի երկու կողմ, և թե կողմերի պահվածքն ինչքան է ազդում մեր խոսքի վրա:
- Ուսումնասիրել լավագույն հարցազրուցավարներից մի քանիսին (օրինակ՝ Չարլի Ռոս, Թերի Գրոս, Ջո Ռոզան)՝ նշելով նրանց ստեղծագործական մոտեցմանը բնորոշ հինգ առանձնահատկություն: Որն է այս հարցազրուցավարների տված հարցերի գաղտնիքը:
- Սովորողներին առաջարկվում է հարցազրույց անցկացնել ժանրի որևէ տարատեսակով և իրենց նախընտրած թեմայի շուրջ կամ շարունակել նախորդ դասերին ընտրած թեման: Մոնտաժված հարցազրույցը պետք է լինի մոտ հինգ րոպե: Հարցազրույցը ներբեռնել Google Drive-ում՝ հաջորդ դասին համատեղ լսելու և քննարկելու համար:
- Լսարանում բաժանվել զույգերի, իրարից հարցազրույց վերցնել՝ օգտագործելով սմարթֆոնը: Ուշադրություն դարձնել՝ ով որքանով է վարժ տիրապետում այդ գործիքին, որքանով է ձայնագրումը խանգարում կամ օգնում անկեղծ զրույցին, ինչ կարելի է անել լարվածությունը մեղմելու համար և այլն:

ԼՍԵԼՈՒ ՆՅՈՒԹԵՐ

«The Kitchen Sisters Present» փողփասթում հաճախ հեղինակային խոսք առհասարակ չկա. նյութը հերոսի մենախոսությունն է: «This American Life»-ի հաղորդման «Գործողություն Երրորդ»-ն Այրա Գլասը համարում է իր լավագույն հարցազրույցներից մեկը: Այս թողարկումները կարելի է քննարկել՝ հաշվի առնելով մեթոդաբանության մեջ ներկայացված եղանակները:



ԹԵՄԱ

8



ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔԸ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ/ԿԱՐԴԱԼ «ԱԿԱՆՋԻ ՀԱՄԱՐ»

Հեղինակի խոսքն անհրաժեշտ է պատումին կոնտեքստ տալու համար: Ձեր պատմության շնորհիվ լսողը պիտի այլ վայր տեղափոխվի ու պատկերացնի, թե ինչ է այնտեղ կատարվում, իսկ եթե որևէ խնդիր ենք վեր հանում, ապա պետք է լիարժեքորեն ընկալի այն իր բոլոր կողմերով: Եվ հաճախ միայն ծայնային էֆեկտներով և հերոսների ու մասնագետների մենախոսությամբ այդ տեղափոխումն ու ընկալումը հնարավոր չի ապահովել: Հեղինակի խոսքը յուրատեսակ խարիսխ է, այն իր վրա է կրում մատուցվելիք տեղեկատվության մեջ լսարանին կողմնորոշելու, նյութի կարևոր ու անհրաժեշտ հատվածների վրա ուշադրությունը սևեռելու գործառնություն: Հեղինակի խոսքը նաև դետալներ է փոխանցում, որոնք ծայնագրիչից դուրս են մնացել, որոնք, այսպես ասած, ծայնային չեն: Այնպես որ, օգտագործեք ձեր գրառումները, որ արել եք հետազոտությունների ժամանակ ձեր խոսքը գրելիս: Օրինակ, եթե դուք հարցազրույցը վերցրել եք սրճարանում, հավանաբար ծայնագրիչը գրել է հարակից աղմուկը, խոսակցությունները, սուրճի մեքենայի ձայնը... Բայց, դիցուք, սրճարանում ձեր կողքի սեղանի մոտ նստած է եղել կառավարության ներկայացուցիչ, որի ներկայությունը կաշկանդել է ձեր զրուցակցին: Այդ էմոցիոնալ ֆոնը ծայնային արտահայտում չունի, բայց գուցե կարևոր է լսողին կոնտեքստը ներկայացնելու համար: Հեղինակներն իրենց խոսքում հաճախ նկարագրում են զրուցակցի հագուստը, պահվածքը, նաև միջավայրն ու, այո՛, այնտեղ տեղի ունեցող ինչ-ինչ իրավիճակներ, որոնք կարող են այս կամ այն կերպ երանգավորել զրույցի ընթացքը: Նկարագրություններում եղեք հստակ: Տվեք ունկնդրին դիպուկ նրբերանգներ և մանրամասներ, որոնցով նա կկառուցի պատկերն իր ուղեղում (theatre in the mind): Այլ կերպ ասած՝ դուք, կարծես, մեկ աթոռ էլ տրամադրում եք ձեր ունկնդրին և հրավիրում նրան միասին հետևելու զրույցի ընթացքին, զգալու մթնոլորտը, որտեղ այն տեղի է ունենում:

Սակայն, ինչպես նկատեցինք, ոչ ճայնային դետալներ տրամադրելուց բացի, հեղինակի խոսքը կարող է առաջնորդել պատումը, կապել հաղորդման բլոկներն ու բաղադրիչներն իրար: Ձեր խոսքը պետք է նախապատրաստի բլոկի սկզբին, իսկ վերջաբանի խոսքը պետք է կապվի վերջին ճայնային բլոկի մտքի հետ:

Իհարկե, պետք է նկատել, որ անգամ մենախոսական ձևաչափերում, երբ էպիզոդն ամբողջությամբ հերոսի խոսքով է ձևավորվում, նյութի «գլխավոր հերոսը» մնում է փոդքասթի հեղինակը (կամ հեղինակները): Նա է իր գաղափարի տերը, հեղինակն է ընտրում՝ ինչ հարցադրումներով օգնի գրուցակցին, ինչպես տրամադրի նրան խոսելու, իսկ արդեն մոնտաժի ժամանակ տեխնիկական ու ստեղծագործական ինչ հնարքներով ու եղանակներով ամբողջացնի ասելիքը, որ այն ստանա կուռ կառուցվածք:

ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ «ԱՎԱՆՋԻ ՀԱՄԱՐ»

Գրեք պարզ ու մատչելի: Երբ ասում ենք, որ լսողության համար ստեղծվող պատումը պետք է պարզ ու մատչելի լինի, իսկ լեզուն, որով այն ներկայացվում է, առօրյա-խոսակցականին մոտ, միայն պարզ նախադասություններով գրելն ու խոսելը նկատի չունենք: Այս խիստ կարևոր պահանջի կողքին, սակայն, կա ճայնային տեղեկատվության հետ աշխատելու գրագիտություն, որը պետք է պահպանել, որպեսզի ունկնդրի մոտ չառաջանա ընկալման խոչընդոտ: Օրինակ, չակերտները շատ քմահաճ են. չէ՞ որ դրանք ունկնդիրը չի տեսնում, և ականջով որսալը շատ դժվար է: Այդ իսկ պատճառով պետք է այնպես անել, որ ուղղակի խոսքը ճշգրտորեն ներմուծվի տեքստ կամ չակերտի մեջ դրված միջոցառման երկար անվանումը չկորչի տեքստի մեջ: Թվերը «մարսել» տալն այս առումով ևս շատ կարևոր է: Դրանց հետ սխալ աշխատանքը նույնպես կարող է էապես ազդել նյութի պարզության վրա: Երբ ասում ենք «Համաշխարհային բանկը երեքուկես միլիոն դոլար արժողությամբ վարկ է տրամադրել այսինչ երկրին»... Ի՞նչ կտա դա լսարանին: Պետք է գտնել համեմատելու, չափելու տարբերակներ, օրինակ, «Այդ գումարը կուղղվի գյուղատնտեսական ոլորտն արդիականացնելուն

և մարզերում կրթական նոր ծրագրեր ներդնելուն»: Ուշադրություն պետք է դարձնել նաև մեծ թվերին, որոնք անհրաժեշտության դեպքում պետք է կլորացնել:

Խոսքը բնական: Ունկնդիրը չպիտի իմանա, որ դուք կարդում եք թղթից, նրան պետք է թվա, որ դուք խոսում եք իր հետ: Պատկերացրեք՝ պատմում եք ձեր պատմությունը ոչ թե բոլորին, այլ կոնկրետ մեկ մարդու (այս մոտեցումը կարող է օգնել նաև պատմության համար սկիզբ գրելիս): Նույնիսկ կարող եք պատկերացնել կոնկրետ կերպար, օրինակ՝ ձեր ընկերոջը: Խոսքն այս դեպքում շատ մտերմիկ երանգ կստանա՝ օգնելով ձեզ «մտնել» տեքստի մեջ:

Լավագույն է պիզոդներն ունեն առօրյա խոսքին հատուկ ոճ, ազատ ու թեթև են հոսում, ինչն, իհարկե, երկարատև նախապատրաստական աշխատանքի ու ճիշտ պլանավորման արդյունք է: Ձայնագրվելիս գուցե օգտակար լինի սենյակում ինչ-որ մեկի ներկայությունը, որ խոսքն ավելի պատմողական ու երկխոսության նման հնչի: Փողքասթի լավագույն է պիզոդներում հեղինակները ստեղծում են ձայնային այն կայուն տարածությունը, որն ունկնդիրներին պահում է ներգրավված: Շատ կարևոր է ընթերցման տեմպը: Օպտիմալ է համարվում այն տեմպը, որը ոչ շատ արագ է և ոչ էլ շատ դանդաղ: Երկար, անհասկանալի դադարներ չպետք է լինեն: Եվ չպետք է լինեն պահեր, երբ շատ արագ եք խոսում, որպեսզի ունկնդիրը ժամանակ ունենա ընկալելու ձեր ասածը: Այնպես որ, պահպանե՛ք խելամիտ տեմպ:

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ.

- Գրեք կարճ բառերով, պարզ նախադասություններով: Բարդ ստորադասական նախադասությունները տաբու են ռադիոյում և փողքասթում: Հիշեք Հեմինգուեյի ոճը. մեկ միտք՝ մեկ նախադասություն: Խուսափեք նաև մի քանի վանկանի բառերից, եթե կան դրանց կարճ հոմանիշները:
- Մի՛ օգտագործեք այնպիսի գրական բառեր, որոնք խոսքում չէիք գործածի:
- Խուսափեք դերանուններն անընդհատ կրկնելուց, քանի որ լսողը կարող է մոռանալ՝ ում կամ ինչի մասին է խոսքը: Նորմալ է անունները կրկնելը:
- Խուսափեք կրավորական սեռից և հապավումներից, եթե դրանք այնքան հասկանալի չեն, որքան ՀՆԱ-ն կամ ՄԱԿ-ը:
- Խուսափեք կլիշեներից. մի՛ ավարտեք հաղորդումը «Միայն ժամանակը ցույց կտա» տիպի բառակապակցություններով: Ձայնային նյութի առաջաբանն ու վերջաբանը պետք է հավասարապես ուժեղ լինեն, իսկ նման մտքերը թուլացնում են ձեր պատումը:
- Բարձրաձայն կարդացեք տեքստը և ինքներդ կորսա՞ք ինչն է պետք խմբագրել:



ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրել նույն թեման պատմված ծայնային և այլ մեդիաներով: Բազմաթիվ հայտնի օրաթերթեր ունեն իրենց փոդքասթը: Ամենահայտնին է New York Times թերթի «The Daily» փոդքասթը: Դասախոսը կարող է կազմակերպել մեկ հոդվածի ընթերցում և նույն նյութի՝ ծայնային տարբերակի ունկնդրում, որտեղ հստակորեն կերևա «ականջի և աչքի համար» գրելու տեխնիկաների տարբերությունը, օրինակ, աշխատանքը չակերտների հետ: Քննարկման այլ հարցեր. ինչու են ծայնային տարբերակում օգտագործված ավելի պարզ նախադասություններ, ինչու որոշ նկարագրություններ չկան և փոխարինված են ծայնային էֆեկտներով:

Կարելի է ընտրել «**Did Russia Steal the World Cup?**» հոդվածը <https://www.nytimes.com/2018/06/07/opinion/sunday/world-cup-fifa-corruption-russia.html>

Հոդվածի ծայնային ադապտացիան՝ **Listen to ‘The Daily’: The World Cup’s Mysterious Path to Russia»** <https://www.nytimes.com/2018/06/22/podcasts/the-daily/russia-world-cup-fifa-corruption.html>

Այս համեմատության մասին ավելի մանրամասն՝ <https://bit.ly/2SkRFf2>

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Լսել էպիզոդներ, որոնք կազմված են հարցազրույցի հատվածներից և հեղինակի խոսքից: Նկատել՝ ինչ դեր է կատարում հեղինակի խոսքը: Խմբով կարդալ «Buddy Picture» թողարկման սղագրությունը և քննարկել՝ ինչու է հեղինակի խոսքը հաջողված կամ անհաջող (<https://www.thisamericanlife.org/203/recordings-for-someone/act-one>):
- Քննարկել հեղինակի խոսքի անհրաժեշտության հարցը նախորդ դասին արված հարցազրույցների օրինակով: Անհրաժեշտության դեպքում սովորողները պետք է ավելացնեն հեղինակի խոսք իրենց նյութին՝ քննարկելով, թե ինչ որակի ու քանակի աշխատանք պետք է արվի պատումն այդ ձևաչափում ամբողջացնելու համար:
- Սովորողներին հանձնարարել բերել իրենց խոսքը ոչ միայն ձայնագրությամբ, այլև թղթի վրա տպված: Բոլոր սովորողները կարդում են հեղինակի խոսքը և քննարկում՝ ում մոտ է բնական ստացվել:
- Սովորողներն ուսումնասիրում են NPR-ի «This I Believe» ֆորմատը, որտեղ հյուրերը մենախոսում են իրենց հավատալիքների մասին: Սովորողը պատրաստում է իր անձնական պատմությունն այդ ֆորմատով (<https://www.npr.org/series/4538138/this-i-believe>):

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Why You Hate the Sound of Your Own Voice,

<https://bit.ly/3umErMD>

Campfire tales: The essentials of writing for radio,

<https://n.pr/3fJqhkv>

Narration: Writing for the Ear,

<https://bit.ly/3rOholP>

ԹԵՄԱ 9



ՏԱՐԱԾՈՒՄ, ԱՌԱՋԽԱՂԱՅՈՒՄ ԵՎ ՄՈՆԵՏԻԶԱՑԻԱ

Փողքասթները հրապարակվում և տարածվում են հոսթինգ և սթրիմինգ ծառայություններով: Պատրաստի փողքասթը նախ հայտնվում է հոսթինգում (հյուրընկալում), հետո՝ սթրիմինգ ծառայությունների ցանկում: Հոսթինգը հարթակ է, որտեղ տեղադրվում է արդեն պատրաստի փողքասթը: Որպես կանոն, հոսթինգ ծառայությունները փողքասթ RSS FEED կազմելու համար պահանջում են փողքասթի անուն, նկար (artwork), կարճ նկարագրություն: Համարեք, որ այս երեքը միասին կազմում են մի թիվ, որը ստեղծում է փողքասթի բրենդը: Քանի որ փողքասթն աուդիոբովանդակություն է, նկարը լինելու է ձեր միակ վիզուալ գործիքը: Այնպես որ, կարելի է դրա շուրջ երկար մտածել կամ դիմել պրոֆեսիոնալ օգնության: Նկարագրության լեզուն էլ պիտի հուշի ոչ միայն փողքասթի թեմայի, այլև ձեր փողքասթի տրամադրության, օրինակ՝ հումորի մասին: Այդ մի քանի նախադասությամբ պետք է կարողանալ գրավել պոտենցիալ ունկնդրին:

- Եթե չեք կարող ներգրավել պրոֆեսիոնալ իլյուստրատոր-դիզայների, կարող եք փողքասթի նկար պատրաստել օնլայն գործիքներով, օրինակ՝ <https://www.canva.com/>-ով կամ <https://crello.com/> -ով:

Հոսթինգում հայտնվելուց հետո՝ RSS հղումների միջոցով, փողքասթը տեղ է գտնում նաև սթրիմինգ ծառայությունների ցանկում (Google Podcasts, Apple Podcast, Spotify, Яндекс.Музыка և այլն): **iTunes**-ում հայտնվելու համար պետք է բացել Apple Account և դիմում գրել: Ամեն ինչ ճիշտ լրացնելու դեպքում հիևզ օրվա ընթացքում կհայտնվեք iPhone-ներում: Ի դեպ, Google Podcast-ում կհայտնվեք ավտոմատ կերպով:

Առաջխաղացում սոցցանցերում և օֆլայն տարածքներում: Սոցցանցային տիրույթում փողքասթի առաջխաղացմամբ

գբաղվելու (promote), այն հանրայնացնելու համար պիտի գործածվեն բոլոր հարթակները, բայց տարբեր ձևաչափերով՝ պահպանելով փոդքասթի աուդիո բնույթը: Օրինակ՝ Facebook-ն ավելի տեքստային, աուդիո/վիդեո տարբերակով տարածելու համար է, Instagram-ում՝ վիդեոն և լուսանկարն են առաջնային, Twitter-ում՝ կարճ, բայց թիրախային խոսքը, բլոգը բոլոր տեսակի աուդիո և վիզուալ կոնտենտի համար է: Օնլայն տարածքում տեսանելի լինելը կարևոր է, սակայն պակաս կարևոր չէ դրան զուգահեռ լինել նաև օֆլայն տիրույթում, օրինակ՝ ռադիոյում, հեռուստատեսությունում և այլն: Օֆլայն տարածման քաղաքականության մեջ կարելի է նաև ներառել հանրային միջոցառումներ՝ փոդքասթի ներկայացում, թեմատիկ քննարկումներ, միասին լսել-քննարկելու իվենթներ, փոդքասթի փառատոններ և մրցույթներ:

Համայնքների ստեղծում, համագործակցություն, մոնետիզացիա:

Փոդքասթը հասանելի և ճանաչելի դարձնելու համար կարևոր է համայնքների ստեղծումը (օրինակ՝ Facebook խմբեր կամ օֆլայն տիրույթում փոդքասթերների պարբերական հանդիպում-քննարկումներ): Համայնքների ստեղծումը կնպաստի մյուս փոդքասթերների հետ համագործակցությանը: Իսկ ինչպե՞ս համագործակցել: Օրինակ՝ Crossposting տարբերակով. թեմատիկայով նման փոդքասթները փոխանակվում են պրոմոներով (որոնք դրվում են էպիզոդի որևէ հատվածում) կամ անոնսներով (դրանք կրկին տեղադրվում են որևէ հատվածում՝ սկզբում, մեջտեղում կամ վերջում): Բացառված չէ նաև որևէ էպիզոդի ստեղծումը միասին:

Գոյություն ունի փոդքասթի մոնետիզացիայի երկու տարբերակ՝ **ուղղակի և անուղղակի:**

Ուղղակի մոնետիզացիայի դեպքում դուք վաճառում եք փոդքասթը որպես արտադրանք:

Անուղղակի մոնետիզացիայի դեպքում փոդքասթի միջոցով վաճառում եք այլ արտադրանք կամ ծառայություն:

Ուղղակի մոնետիզացիայի տարբերակները շատ են:

- **Գովազդ:** Փողքասթի զարգացման ինչ-որ փուլում գովազդատուի ներգրավումը: Կարևոր է ներգրավել այնպիսի գովազդատուների, որոնք թեմատիկ առումով մոտ են փողքասթի կոնտենտին:
- **Բաժանորդագրություն:** Օգտատերերի/ունկնդիրնումերի բաժանորդագրությամբ գումար աշխատելը նույնպես ընդունված ձևաչափ է, եթե կոնտենտը հետաքրքիր է՝ նաև աշխատող տարբերակ:
- **Վաճառք:** Պատրաստի փողքասթը երկրորդ դեմքին (ռադիոկայանի, հեռուստաընկերության կամ հետաքրքրված անձի) տրամադրելը նույնպես տարբերակ է:
- **Հպիգոդի վաճառք:** Բացառիկ հպիգոդի համար կարող եք սահմանել սիմվոլիկ գումար և դրան հասանելիություն ունենալու համար սահմանել բաժանորդագրության վճար:
- **Ֆինանսավորման այլաղբյուրներ:** Այստեղ կարող ենք հասկանալ այն բոլոր միջոցները, որոնք կարող են եկամտի աղբյուր դառնալ փողքասթի ստեղծման ու հեռարձակման համար:

Փողքասթերների շրջանում տարածված է [patreon.com](https://www.patreon.com) պլատֆորմը, որն ազատ ստեղծագործողներին ֆինանսապես օգնելու համար է:

Անուղղակի մոնետիզացիայի դեպքում տարածված տարբերակները:

- **Ֆիզիկական արտադրանքի վաճառք:** Երբ ունկնդիրը հավանում է փողքասթը, ապա վերջինիս միջոցով կարելի է վաճառել տարատեսակ իրեր՝ սեփական կամ հովանավորի լոգոյով գլխարկներ, պայուսակներ, բլուզներ, հեռախոսի պատյաններ, թերմոսներ և այլն:
- **Դասընթացների, տուրերի նվիրատվություն կամ պրոմոկոդերի խաղարկում:** Հպիգոդներում հնարավոր է վաճառել դասընթացների մասնակցության կամ տուրերի տոմսեր: Այստեղ դուք և ձեր փողքասթը դառնում եք միջնորդ X ծառայություն առաջարկող ընկերության և նրա պոտենցիալ սպառողի միջև:
- **Միջոցառումների վաճառք:** Եթե ունեք լոկալ ունկնդիրներ, ապա կազմակերպեք թեմատիկ հանդիպում և վաճառեք տոմսերը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սովորողներին բաժանել երկու կամ երեք խմբի: Ամեն մի խմբին հանձնարարել մշակել առաջխաղացման, տարածման պլան որևէ փոդքասթի համար: Աշխատանքի վերջում յուրաքանչյուր թիմ ներկայացնում է իր պլանը, որը քննարկվում է լսարանում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Դիտարկել 10 տարբեր թեմաներով և տարբեր ժանրերի փոդքասթներ՝ էկրանին: Ուշադրություն դարձնել նկարի, անվան, նկարագրության ընտրությանը: Առաջադրանքը կարելի է կատարել թիմով: Խումբը բաժանվում է մի քանի թիմի (ի դեպ, ամեն թիմ կարող է վերցնել մեկ կամ երկու փոդքասթ կամ աշխատել բոլոր դիտած փոդքասթների ուղղությամբ): Փոդքասթները դիտելուց հետո յուրաքանչյուր թիմ քննարկում է անցկացնում՝ մոտ 10 րոպե տևողությամբ՝ պատրաստելով սեղմ ելույթ այն մասին, թե որքան հաջող էին ընտրված վերոնշյալ բաղադրիչները, ինչպես են աշխատում, ինչ են տալիս լսարանին և այլն: Կարելի է քննարկել յուրօրինակ առաջխաղացման օրինակներ ևս:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Podcast Love,
<http://podcast.love>

Transom.org, HowSound.org,
<http://training.npr.org>

Фестиваль СЛЫШ,
<https://bit.ly/3dyVpAF>

Third Coast International Audio Festival,
<https://www.thirdcoastfestival.org/>

The Piano,
<https://www.radioatlas.org/>

HearSay International Audio Arts Festival,
<http://www.hearsayfestival.ie/>

Maltitude at Podcast Movement Virtual,
<https://multitude productions/blog/multitude-at-podcast-movement>



ԹԵՄԱ

10



ԼՍԱՐԱՆԻ ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄ

Փողքասթի թիրախային բովանդակությունը ստեղծում է նաև կոնկրետ լսարան: Ի տարբերություն հանրային մեդիայի, որի լսարանը, ենթադրաբար, հասարակության բոլոր անդամներն են կամ գոնե դրա մի լայն հատվածը, փողքասթերը հաճախ ունի իր ունկնդրի սոցիալ-մշակութային պատկանելության մասին մոտավոր պատկերացում: Եթե, օրինակ, ձեր փողքասթն էլեկտրոնային երաժշտության մասին է, հայերենով է, դուք գիտեք, որ այն, հավանաբար, լսում է մեկը, ով սիրում է էլեկտրոնային երաժշտություն, երիտասարդ է, գնում է ակումբներ պարելու և այլն: Լսարանին ճանաչելու հնարավորությունը փողքասթին թույլ է տալիս նաև բարձր արդյունավետությամբ գովազդային արշավներ պլանավորել:

Փողքասթի հեղինակի և լսարանի միջև ստեղծվում են կայուն կապեր՝ լսարանի ներգրավման ճիշտ գործիքներ օգտագործելու դեպքում: Երբեմն նույնիսկ խրախուսվում է լսարանի մասնակցությունն արտադրությանը: Օրինակ, լրագրող Էրիկա Չայլմանը քովիդով պայմանավորված կարանտինի օրերին խնդրել էր իր լսարանին իրեն ուղարկել աուդիոձայնագրություններ ինքնամեկուսացման մասին: Նա մոնտաժել էր անձնական բնույթի այդ ձայնագրությունները, ձայնային ձևավորում արել և ստացել [մեկ հաղորդում \(«Our Show Six»\)](#), որտեղ լսարանը, փաստորեն, համահեղինակ էր:

«This American Life» փողքասթի ամենահայտնի թողարկումներից մեկը ևս ստեղծվել է լսարանի շնորհիվ: Փողքասթի հեղինակները խնդրել էին ունկնդիրներին ուղարկել պատմություններ իրենց հետ պատահած ամենատպալորիչ պատահականության մասին: Ստացվել էր 1300 պատում, որոնցից լավագույնները փողքասթի խմբագրակազմը հրապարակել էր [«No Coincidence, No story»](#) հաղորդման մեջ:

Լսարանը կարող է նաև մասնակցել փողքասթի բրենդի կերտմանը, թեմայի զարգացմանն ու տարածմանը:

Օրինակ՝ «Hardcore history» փողքասթի սիրահարներն ունեն խմբեր սոցցանցերում (օրինակ, Hardcore History with Dan Carlin ֆեյսբուքյան խումբը), որտեղ քննարկում են էպիզոդները: Այսինքն՝ փողքասթի շնորհիվ իրար են գտնում նմանատիպ հետաքրքրություններ ունեցող մարդիկ և շփվում իրար հետ: Այս դեպքում ունկնդիրներին միավորել են պատմական այն թեմաները, որոնք ընկած են փողքասթի թեմատիկ հիմքում:

Այսինքն՝ լսարանին ճանաչելը ոչ միայն կօգնի ձեզ ճիշտ լեզու ու ֆորմատ ընտրել, այլև պլանավորել երկարաժամկետ համագործակցություն:

Հիշե՛ք. հաճախ փողքասթներն ու դրանց հեղինակները սահմանում են մի լսարան, սակայն պարզվում է, որ թեման հետաքրքրում է նաև ուրիշներին: Կապ պահպանեք ձեր լսարանի հետ: Սա բոլորովին չի նշանակում ամեն օր նրանց նամակ գրել, մեկնաբանություններում երկար տեքստեր շարադրել... Արեք դա այնպես, որ լսարանը ենթագիտակցորեն հասկանա ձեր ու իր միջև կապը: Օրինակ՝ մշակեք փողքասթի էպիզոդի հրապարակման մեխանիզմ. յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթի օրն այսինչ ժամին կամ ամեն ամսվա տասներորդ օրը: Գտեք ձեր տարբերակը: Լսարանը սկսում է սպասել ձեզ ինչպես իր ամենօրյա սուրճին կամ թեյին, ձեր փողքասթի ամեն էպիզոդ նրա համար դառնում է սովորույթի ուժով ձեռք բերված հաճելի կախվածություն: Բաժանորդագրություն ապահովելը ձեզ թույլ կտա միշտ դիտարկել հսկել լսարանն ու նրա պահանջները: Հնարավորություն տվեք մարդկանց ոչ միայն լսել ձեզ, այլև դառնալ մասնակիցը, իրենց յուրային զգալ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննարկել լսարանին ներգրավվելու օրինակներ փոդքասթինգում և ոչ միայն: Հարուստ լսարանի ներդրումով ստեղծված պատմությունների պահոց է <https://postpost.media/>-ն :

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Տվե՛ք ձեզ այս հարցը՝ ինչո՞ւ եմ փոդքասթ արտադրում, հարմա՞ր է արդյոք իմ գաղափարը իբրև փոդքասթ ներկայացնելը, ո՞ւմ համար եմ արտադրում, արդյո՞ք այն հետաքրքիր կլինի լայն լսարանի, թե՞ թիրախային խմբի համար, ինչպե՞ս եմ այն հասանելի դարձնելու... Դասախոսը կարող է այս հարցադրումներով սկսել գործնական հատվածին անցումը, այնուհետև առաջարկել գրի առնել պատասխանները՝ փորձելով տալ նաև այս հարցի պատասխանը՝ եթե դո՞ւք չլինեիք փոդքասթի հեղինակը, այդ պատասխանները կբավարարեի՞ն ձեզ:

Ուսումնասիրել This American Life, Love and Radio, Joe Rogan Experience, Ջետք, Это Провал, Полка փոդքասթների լսարանի առանձնահատկությունները և ըստ դրանց հեղինակների՝ լսարանի ներգրավման մարտավարությունը:

ԹԵՄԱ

11



ՓԻՑՉԻՆԳ (PITCHING)

Անհատական փողքասթի համար ֆինանսական ռեսուրսներ գտնելը ևս կարևոր հարց է:

Այդ պատճառով հեղինակները հաճախ դիմում են ռադիոկայաններին և առաջարկում իրենց փողքասթը հեռարձակել, համաֆինանսավորել, տրամադրել ստուդիա և այլն: Փիթչ. օտարալեզու այս բառով են բնորոշում նախագծի համառոտ ու համակարգված պրեզենտացիան⁵: Այսպիսով, փիթչինգն այն գործընթացն է, երբ հեղինակը ներկայացնում է իր գաղափարը հեռարձակողին կամ գովազդատուին՝ տալով իր գաղափարի նկարագիրն այնքան գրավիչ ու սեղմ, որ ցանկություն առաջանա այն կյանքի կոչել և ֆինանսավորել: Բացի պրակտիկ նշանակությունից, փիթչ անելու տեխնիկան օգնում է հեղինակին ավելի լավ պատկերացնել իր պատումը: Խմբագիրները հարյուրավոր պատմությունների փիթչեր են լսում, մինչև ընտրում են՝ որ հեղինակին տալ հնարավորություն՝ ներկայացնելու իր ստեղծած պատմությունը:

Այդ պատճառով պետք է փորձել լինել լակոնիկ ու համոզիչ:

Փիթչը պետք է տևի մոտ երկու րոպե և ներառի երևակայական խմբագրի հետևյալ հարցերի պատասխանները:

- Ինչո՞ւ պիտի այդ թեման ինձ հետաքրքրի:
- Ի՞նչ կլինի, եթե չընդունենք այդ նյութը:
- Ի՞նչ կիմանամ ես, եթե այդ նյութն արվի:
- Ինչպե՞ս ես պլանավորում ստեղծել պատումը:
- Ի՞նչ տևողության պատում կստանաս:
- Ե՞րբ պատումը պատրաստ կլինի:

⁵ Փիթչ. pitch բառն անգլերենից թարգմանաբար նշանակում է նետում, փոխանցում:

1. Արդյո՞ք սա է ճիշտ պահն այս փողքասթը սկսելու համար և ինչո՞ւ:

Հաճախ միջավայրն ու իրավիճակներն են մեզ թելադրում, թե ինչի մասին պետք է խոսել, ինչի մասին պետք է փողքասթ պատրաստել: Բայց կան թեմաներ, որոնք ակտուալ են միշտ, կարևորը՝ ունենալ յուրահատուկ ձեռագիր որևէ թեմա մատուցելիս: Եթե դուք ընտրել եք այնպիսի թեմա, որը, ըստ ձեզ, շատ ծեծված է, բայց միևնույն է, համոզված եք, որ դուք դա բոլորից լավ կներկայացնեք, կունենաք ռադիկալ տարբեր, հետաքրքիր մոտեցում, կստիպեք ունկնդրին հասկանալ, որ սա հենց այն պահն է, երբ պիտի անդրադառնալ այդ թեմային, ուրեմն առաջին քայլն արված է:

2. Ռիսկերը

Գնահատեք ռիսկերն ու ներկայացրեք դրանք. դա ոչ միայն լրջություն կհաղորդի ձեր փիթչին, այլև հնարավորություն կտա ձեզ իրատես լինել ու հասկանալ թեմայի հետ կապված հավանական խոչընդոտները: Ենթադրենք՝ դուք պատրաստվում եք խոսել ՄԻԱՎ ունեցող կանանց հետ. արդյո՞ք գտել եք նրանց, կամ ինչպե՞ս եք պատրաստվում գտնել, ինչպե՞ս եք համոզելու, որ խոսեն, որքա՞ն է հավանականությունը, որ դուք կունենաք շատ էպիզոդներ և այսպես շարունակ:

3. Ո՞ր լսարանի համար է ձեր փողքասթը:

Այն, ինչ հետաքրքրում է ձեզ, կարող է հետաքրքրել ոչ բոլորին, բայց եթե ձեզ հետաքրքրում է, ուրեմն կգտնվեն նաև համախոհներ: Փորձեք ձևակերպել, թե ովքեր են ձեր պոտենցիալ ունկնդիրները, խոսեք նրանց մասին, պատկերացրեք նրանց ձեր մտքում, գրեք, թե ինչու եք կարծում, որ հատկապես այս թիրախային լսարանին պետք է հետաքրքրի ձեր փողքասթը, փորձեք խոսել նաև այն մարդկանց մասին, որոնց դուք չեք դիտարկում որպես պոտենցիալ ունկնդիր, բայց կարծում եք, որ թեման այնպես կարող է ներկայացնել, որ նրանց էլ կներգրավեք:

4. Ինչո՞ւ դուք և ոչ մեկ ուրիշը

Փիթեջում խոսեք այն մասին, թե ինչու հենց դուք պիտի լինեք այն մարդը, որը պետք է տվյալ թեմայի մասին խոսի: Եթե անգամ ձեր փողքասթը դոկումենտալ է, և այնտեղ հաղորդավարական մեկնաբանությունը բացակայում է, դուք պետք է հասկանաք, թե ինչու եք հենց դուք անդրադառնում այդ թեմային: Ներկայացրեք, թե ինչպես եք պատրաստվում աշխատել, անդրադարձեք ձևաչափին, բացատրեք, թե ինչքանով է շահեկան այդ ձևաչափը, արդյոք ուսումնասիրել եք նման ձևաչափի այլ փողքասթներ, կամ գուցե դուք առաջի՞նն եք: Համոզեք, որ հենց դուք պիտի լինեք այն մեկը, որը պետք է փողքասթ պատրաստի այն թեմայի մասին, որն ընտրել եք: Այնպես արեք, որ փիթեջում պարզ լինի, որ ով, եթե ոչ դուք, պետք է փողքասթ ստեղծեք:



ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դասախոսը, թեման քննարկելուց հետո կամ հաջորդ դասին (եթե այս թեմայի համար նախատեսվել է երկու դաս), կարող է լսարանում դերային խաղ կազմակերպել: Ուսանողները դասին կամ որպես տնային հանձնարարություն ստանում են փիթչ պատրաստելու հանձնարարություն: Լսարանը վերածվում է խմբագրության կամ կազմակերպության, որի աշխատակիցները սպասում են փողքասթի հեղինակին, որը պետք է ներկայացնի իր փիթչը: Նա պետք է պատրաստ լինի պատասխանելու այն բոլոր հարցերին, որոնք քննարկվել են դասի ընթացքում՝ ինչո՞ւ դու և ոչ մեկ ուրիշը, ինչո՞ւ պիտի այդ թեման ինձ հետաքրքրի և ալլև:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ձայնագրե՛ք ձեր պատրաստած փիթչը. չէ՞ որ սա փողքասթ է, հետևաբար անգամ փիթչը պետք է լինի աուդիո: Արեք դա այնպես, ասես էպիզոդ եք պատրաստում՝ ձայնային էֆեկտներով, երաժշտությամբ, պարզ բառապաշարով: Ցույց տվեք ընկերներին, թող ասեն՝ ինչն է իրենց պակասում, ինչը դուր եկավ, ինչը՝ ոչ: Հաշվի առեք կարծիքները. վաղը դա ձեզ պետք կգա:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

How to Make a Pitch Deck and a Budget

<https://www.wnycstudios.org/podcasts/werkit/articles/how-make-pitch-deck-and-budget>

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ԽՄԲԱԳՐՈՒՄ AUDACITY

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ցանկանցած փողքասթ նյութ ունի երկու բաղադրիչ՝ բովանդակություն և ձև: Բովանդակությունը ձեր նյութի պատմողականությունն է՝ այն, թե ինչ եք դուք պատմում: Իսկ ձևը նյութը մատուցելու մոտեցումն է: Այստեղ հեղինակն առաջարկում է մոնտաժային լուծումներ, որոնք իր նյութին և ձայնային ձևավորմանը տալիս են ձևակերպում:


Մենք կուսումնասիրենք ձայնային ձևավորման հիմունքները և փողքասթի մոնտաժի գործիքները: Պրակտիկ մասը կկատարենք Audacity աուդիոխմբագրման անվճար ծրագրով:

Փողքասթի հեղինակն իր ձեռքի տակ ունի մի քանի մոնտաժային գործիք՝

- Ձայնային տարրերի կտրում
- Ձայնի մաքրում
- Մուլտիթրեք խմբագրում
- Ձայնային տարրերի փոխհարաբերության շտկում
- Աղմուկի մաքրում

Մենք կդիտարկենք տեխնիկական մոնտաժը Audacity ծրագրով: Ձայնային ֆայլը Audacity-ում մոնտաժելու համար նախ այն ընտրում ենք իր պանակից և գցում Audacity-ի մեջ:

Եթե ունեք մի քանի ձայնային տարրեր, դրանք կարող եք անվանակոչել՝ ձախ կողմում սեղմելով եռանկյունու վրա, ապա՝ **name:**



Ձայնային տարրեր տարրերը հեշտությամբ խմբագրելու համար դրանք կարելի է դնել տարրեր վարման գծերի վրա: Նոր խմբագրական գիծ ավելացնելու համար սեղմեք ձախ վերևի անկյունից **Tracks > Add New Track**.


Ձայնագրությունը մեծացնելու և փոքրացնելու համար օգտագործեք

Control+1


Control+3

ՁԱՅՆԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ԿՏՐՈՒՄ


Այս փուլում փոդքասթի մոնտաժողն ընտրում է իր նյութի կարևոր հատվածները և բաժանում դրանք: Audacity-ում դա արվում է **Edit > Clip Boundaries > Split** ֆունկցիայով:



Կտրած ֆայլը կարող եք տեղափոխել հիմնական գործիքների մեջ




Ֆայլի հատուկ հատվածները կտրելու համար կարող եք օգտագործել **Cut** գործիքը կամ **Delete** կոճակը:



Ձայնը մաքրելու համար հարկավոր է օգտվել այս երեք գործիքներից: Սրանք ձեզ կօգնեն ազատվել ավելորդ ձայներից, որոնք աղմուկ են ստեղծում նյութում և կարող են խանգարել նյութը հստակ ընկալելուն: Ձայնային նյութեր արտադրողները, որպես կանոն, շատ ուշադիր խմբագրում են իրենց ֆայլը և փորձում ազատվել ավելորդ ձայներից, ինչպես օրինակ, ընդը կամ աաաա, ճպպոցները, կմկմոցները, կրկնությունները և այլն: Սա ձեր նյութը դարձնում է ավելի հեշտ լսելի և օգնում ունկնդրին կենտրոնանալ բովանդակության վրա: Այս փուլում, սակայն, աշխատեք չընկնել ծայրահեղությունների հետևից. հնարավոր է բոլոր աաա-երը, մի փոքր երկար տևող դադարներն ու հերոսների շունչը կտրելիս հեշտությամբ զրկեք նյութը բնականությունից՝ դարձնելով այն արհեստական ու անկենդան մի

բան: Հեղինակի, հերոսի, փորձագետի խոսքի ընթացքը պետք է հնարավորինս մոտ լինի բնականին, հակառակ դեպքում կստվերվի նաև այն բովանդակությունը, որը նրանք փորձում են փոխանցել լսարանին: Պարբերաբար լսեք ձեր մոնտաժած հատվածները, հետո՝ նյութն ամբողջությամբ, կարող եք դադար տալ ու նորից լսել. ձեր ականքը, ինչպես տեքստի դեպքում, այստեղ ևս կարող է շատ բան հուշել:


Եթե ձեր ծայնագրած նյութն ունի ավելորդ աղմուկ, որից դուք կուզեք ազատվել, **Audacity**-ն ունի մի գործիք, որը որոշ չափով լուծում է այս խնդիրը:



Այս գործողությունը կատարելու համար ընտրեք դադարի մի հատված, որտեղ լսվում է բնական աղմուկը: Հետո սեղմեք **Effects** (պատուհանի վերևի տողից) ընտրեք **Noise Reduction**, այնուհետ **Get Noise Print**, երբ գործընթացն ավարտվի, կրկին սեղմեք **Effects**, ընտրեք **Noise Reduction** և սեղմեք **Ok**:

Փողքասթ արտադրողն աշխատում է երեք տեսակի ձայնի հետ՝

- հեղինակի խոսք
- բնաձայն (ambience)
- երաժշտություն




Այս երեք ձայնային տարրերի փոխհարաբերությունը հեշտ հաստատելու համար փողքասթի հեղինակները կարող են օգտվել մուլտիթրեք խմբագրումից:

Այս մեթոդն օգնում է վիզուալ պատկերացնել ձայնային տարրերի փոխհարաբերությունները և հեշտությամբ խմբագրել ամեն տարրն ըստ կարիքի:

Սա անելու համար ձեր աուդիոֆայլը տեղադրում եք Audacity գործիքի տարբեր տողերում՝ թրեքներում և աշխատում դրանց վրա ըստ ձեր նպատակի:

Այստեղ կարևոր է ձայները ճիշտ դասավորելը. ըստ անհրաժեշտության կարող եք օգտագործել Fading-ը՝ ձայնի մարման լուծումները: Այստեղ աուդիոարտադրողը ձայնի սկզբի և վերջի մասերից ձայնը աստիճանաբար լռեցնում է՝ ստեղծելով կոր՝ այդպիսով աստիճանաբար ներկայացնելով նոր ձայներ և եղած ձայները աստիճանաբար հեռացնելով:

Սա անելու համար օգտագործվում է Envelope  գործիքը: Այն ընտրելով և աուդիոֆայլի վրա սեղմելով՝ կարող եք ստեղծել ծայրի բարձրության մանիպուլացիայի նոր կետեր և դրանք համապատասխանաբար բարձրացնել կամ իջեցնել:



ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

<https://manual.audacityteam.org/>-ում կարող եք ծանոթանալ այս գործիքի այլ հնարավորություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ՁԱՅՆԱԳՐՄԱՆ ՀՆԱՐՔՆԵՐ. DIY ՍՏՈՒԴԻԱ ԵՎ ՀԵՌԱՎԱՐ ՁԱՅՆԱԳՐՈՒՄ

ԴԱՇՏԱՅԻՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձայնային էֆեկտները հարստացնում և տեղայնացնում են նյութը: Ավելի լավ է շատ ձայնագրեք քանի դեռ դեպքի վայրում եք: Այդպես մեծ ընտրություն կունենաք մոնտաժի փուլում: Գուցե ունենաք մի քանի ժամ ձայնագրություն, ինչից գլուխ հանելը դժվար լինի. որոշ ձայներ հստակ չեն և կարող են տարբեր ասոցիացիաներ առաջացնել, օրինակ՝ քամու սուլոցը, օձի ձայնն այնքան միանշանակ չեն, որքան գիրք թերթելու ձայնը: Այդ պատճառով խորհուրդ է տրվում մակագրել ձայնագրությունների ֆայլերը:

Դաշտային ձայնագրություն անելիս պետք է ձայնագրել բոլոր զգայարաններով: Կարելի է տեղում ձայնագրիչին պատմել, թե ինչ եք զգում, տեսնում, շնչում, քանի որ այդ զգացողությունները ձայնագրիչը չի գրում, այն գրում է միայն ձայն: Քանի դեռ դաշտում եք, նշումներ արեք նաև տետրի մեջ: Ձեր զգացողությունները հետագայում վերհիշելը կօգնի ձեզ սցենար գրելու փուլում:

Հիշենք «Թվին Փիքս» («Twin Peaks») սերիալի հերոս [քննիչ Կուպերին](#), ով ձայնագրում էր իր զգաղոցությունները :

ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ DİY USՈՒԴԻԱՅՈՒՄ

- Ըստ ուսումնասիրությունների՝ դասախոսությունն, օրինակ, ավելի լավ է ընկալվում, երբ այն լսում ենք որակյալ ծայնով: Մինչդեռ անորակ, աղմուկ ու արձագանք պարունակող ծայնագրության բովանդակությունն ընկալելու համար, լսողը պետք է լրացուցիչ ջանք գործադրի՝ ականայից կորցնելով կենտրոնանալու կարողությունը:
- Այնպես որ, եթե լավ բովանդակություն ունեք, այն հրապարակեք լավ որակի ծայնով:
- Ձայնագրվեք փոքր, անաղմուկ սենյակում: Նստեք պատուհանից, նաև դռնից հեռու: Ցանկալի է, որ սենյակի հատակին լինի գորգ: Կարող եք նստել մահճակալի վրա կամ բազմոցին կամ էլ որևէ այլ փափուկ տեղ՝ ծայնամեկուսացում ապահովելու համար: Կարող եք բացել զգեստապահարանի դռները. հագուստը ևս կօգնի ծայնագրությունն անել ավելի մաքուր: Կարող եք ձեր և միկրոֆոնի վրա սավան գցել: Սա խսպառ կվերացնի ծայնի արձագանքի հավանականությունը:
- Ձայնագրելիս անպայման կրեք ծայնագրիչին միացրած ականջակալներ:

ՀԵՌԱՎԱՐ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

խոսել մեկ գործիքով, ծայնագրել՝ երկրորդով

- Կարելի է հարցազրույց տվողի հետ կապվել որևէ օնլայն գործիքով (Skype, Telegram, WhatsApp, Google Hangout և այլն): Զրույցի ընթացքում կրեք ականջակալներ և խնդրեք, որ հարցազրույց տվողը ևս լինի ականջակալներով: Խնդրեք նաև, որ զրույցի համար ընտրի հնարավորինս խաղաղ սենյակ:
- Ձեզ ծայնագրեք սմարթֆոնի ծայնագրիչով, իսկ հարցազրույց տվողին խնդրեք, որ հեռախոսը դնի օդանավի կարգավորման ռեժիմի վրա (airplane setting) և միացնի հեռախոսի ծայնագրիչը:

Թեև խոսակցությունը տեղի է ունենում համակարգչով, բայց լավ կլիկի հեռախոսները պահել ականջին մոտ, որպեսզի ստանաք լավ ու կայուն բարձրությամբ ձայն: Հարցազրույցի վերջում խնդրեք, որ իր կողմից ձայնագրված ֆայլը ձեզ ուղարկի՝ էլեկտրոնային փոստով: Այսպես կունենաք ձեր և հարցազրույց տվողի ձայները՝ առանձին ֆայլերով: Կարող եք դրանք միացնել խմբագրման ժամանակ:

- Խորհուրդ տվեք, որ հարցազրույց տվողն անի այս նկարում առաջարկվող քայլերը.

1 Հեռախոսը դնել Օդանավի ռեժիմի: Այսպես դուք կերաշխավորեք, որ ձայնագրության ընթացքը չի ընդհատվի զանգերով կամ հաղորդագրությունների ազդանշաններով:



2 Գտեք ձեր հեռախոսի ձայնագրիչը:



Voice Memos

3 Սեղմեք ձայնագրման կարմիր կոճակը: Համոզվեք, որ էկրանի վայրկյանները փոխվում են: Սա նշանակում է, որ ձայնագրությունը սկսված է:




4 Հեռախոսը պահեք ականջին, ինչպես տվորական զանգի ժամանակ եք պահում: Այսպես հեռախոսի միկրոֆոնը կլիկի ստաբիլ և բերանի մոտ՝ ապահովելով որակյալ ձայնագրություն:




5 Երբ ավարտեք զրույցը, սեղմեք stop կամ save կոճակը:



6 Սեղմեք ... հրահանգը, որպեսզի կարողանաք գործողություններ անել տվյալ ձայնագրության հետ: Սեղմեք share այն ուղարկելու համար:



7 Հնարավոր տարբերակներից ընտրեք mail կոճակը:



Կան հեռավար ձայնագրման գործիքներ, որոնք թույլ են տալիս մի քանի հոգու միջև զրույց ձայնագրել (<https://riverside.fm/>, <https://squadcast.fm/>):

